ՀՀ Սյունիքի մարզ

«Շվանիձորի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ



«Շվանիձորի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի

# ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ

## 2023-2028 թթ.

*Տնօրենի հավակնորդ*

2023 թ.

**Սույն Զարգացման ծրագիրը կազմվել է ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի՝ 2022 թ. սեպտեմբերի 22-ի «ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՁԵՎԱՉԱՓԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՆ ՈՒ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 15-Ի N 16-Ն ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» №35-Ա հրամանով հաստատված ձևաչափին և պահանջներին համապատասխան:*

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Շվանիձորի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի 2023-2028 թթ. Զարգացման ծրագիրը կազմվել է համաձայն հանրակրթության ոլորտը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի:

Դրանք են.

- ✓ ՀՀ Սահմանադրությունը,
- ✓ «Կրթության մասին» ՀՀ օրենքը,
- ✓ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը,
- ✓ «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքը,
- ✓ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը,
- ✓ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրքը,
- ✓ «Շվանիձորի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կանոնադրությունը՝ հաստատված ՀՀ Սյունիքի մարզպետի կողմից 2017 թ. օգոստոսի 30-ի N 84-Ա որոշմամբ:



Զարգացման ծրագիրը կազմվել է հանրակրթության պետական չափորոշչի, կրթության պետական կառավարման լիազորված մարմնի համապատասխան նորմատիվ իրավական ակտերի և այլ կրթական փաստաթղթերի պահանջների համաձայն:




# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն……………………………………………………………………2
Ներածություն ..................................................................................................3
Զարգացման ծրագրի կառուցվածքային սխեման………………………………………4
1. Հաստատության գործունեությունը........................................................................ 5
1.1. Ի՞նչ կրթական կարիքներ է բավարարում ուսումնական հաստատությունը...................5
1.2. Ուսումնական հաստատությունը և պետության կրթական քաղաքականության միտումները, համայնքի, շահառու խմբերի կարիքներն ու հնարավորությունները.........8
1.3. Ուսումնական հաստատության ենթակառուցվածքները, մարդկային ռեսուրսները և հնարավորությունները.....................................................................................9
2. Իրավիճակի վերլուծությունը, ուժեղ և թույլ կողմերը ……………………...…………11
2.1. Հաստատության բնութագիրը..........................................................................11
2.2. Հաստատության ուժեղ և թույլ կողմերը. Հնարավորությունների վերլուծություն…...………………………………………………12
2.3. Հիմնախնդիրները ………………………………………..………………………..…43
3. Նպատակների և խնդիրների սահմանումը.......................................................50
4. Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողությունների և միջոցառումների ժամանակացույցը ……………………………...56
5. Պատասխանատուները ……………………………………………………………………58
6. Արդյունքների գնահատման չափանիշները ………………………………………..…...59
7. Ծրագրի իրականացման ռիսկերը …...……………………………………………….....62
8. Գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները …………………………………………………….....63
9. Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողությունների և միջոցառումների ժամանակացույցը /Աղյուսակ 1/…………………………………………………………………………………….65
10. Զարգացման ծրագրի կատարման արդյունքի գնահատման չափանիշները /Աղյուսակ 2/…………………………………………………………………………..…..86
11. Վերահսկողության մեխանիզմները …………………………………………………...…96

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

*Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք:*
*/ ՀՀ Սահմանադրություն, հոդված 38 /*

Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը նպատակաուղղված է հայ ժողովրդի հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային և համամարդկային արժեքների պահպանմանն ու զարգացմանը:

Հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության *հենքը ազգային դպրոցն է,* որի գլխավոր նպատակը համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված և մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորումն է:

Կրթության բնագավառում պետական քաղաքականության կազմակերպական *հիմքը կրթության զարգացման պետական ծրագիրն է*, որի գլխավոր նպատակն է.

***գիտելիքի, մշակույթի, գիտակցության, հմտությունների համատարած, ներառական, նորարարական և հանրամատչելի զարգացման և յուրացման միջոցով ունենալ քաղաքակիրթ, ստեղծագործ, նախաձեռնող, կարողունակ ու մրցունակ քաղաքացի, ում համար իրավունքների իրացումը նույնքան կարևոր է, որքան պարտականությունների կատարումը, ով առաջին հերթին իրեն է համարում սեփական բարեկեցության և առողջության պատասխանատու:***

*Դպրոցի զարգացման ծրագիրը* (այսուհետ՝ ԴԶԾ) կարևոր նշանակություն ունի դպրոցի զարգացման համար, քանի որ այն արտացոլում է տվյալ դպրոցի առնվազն 5 տարվա տեսլականը:

Դպրոցի զարգացման ծրագիրն էապես տարբերվում է դպրոցի ավանդական *աշխատանքային պլանից*. եթե դպրոցի աշխատանքային պլանում հիմնականում ուշադրություն է դարձվում դպրոցի ընթացիկ խնդիրների լուծմանը, ապա զարգացման ծրագիրը հանդես է գալիս որպես դպրոցի ռազմավարության պլանավորում, որն ավելի շատ նպատակաուղղված է դեպի ապագան և ունի նորարարական ուղղվածություն:

«Շվանիձորի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի Զարգացման 2023-2028 թթ. ծրագիրը մշակվել է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի և Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման պետական ծրագրի հիմնադրույթներին համապատասխան:

**Սույն Զարգացման ծրագրի նպատակները բխում են.**



- ✓ ՀՀ Կառավարության 2021-2026 թթ. Ծրագրով կրթության զարգացմանն ուղղված նպատակներից,
- ✓ ՀՀ կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագրից:
- ✓ Զարգացման ծրագիրը համապատասխանեցված է ՀՀ պետական քաղաքականության ռազմավարական առաջնահերթությունների հետ՝ արտացոլելով դրանց ներդաշնակ կապը պետական, համայնքային, հանրային և մասնավոր կարիքների, ինչպես նաև համաշխարհային զարգացման միտումների հետ:

Ծրագրի հիմքում դրվել են նաև Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից հաստատված կրթության առանձին ոլորտների ռազմավարական ծրագրերը և զարգացման հայեցակարգերը, ինչպես նաև հաշվի են առնվել Մեղրի համայնքի Շվանիձոր գյուղի և դպրոցի առանձնահատկությունները:

# ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍԽԵՄԱՆ

Հաստատության գործունեությունը

Իրավիճակի վերլուծությունը, ուժեղ և թույլ կողմերը

Նպատակների և խնդիրների սահմանումը

Գործողությունների և միջոցառումների ժամանակացույցը

Պատասխանատուները

Արդյունքների գնահատման չափանիշները

Ծրագրի ռիսկերը

Անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները

Վերահսկողության մեխանիզմները

# 1. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Որակյալ կրթության ապահովումը
ամենակարևոր բանն է, որ մենք կարող ենք
անել ապագա սերունդների համար։
Ռոն Լուիս

## 1.1. Ի՞նչ կրթական կարիքներ է բավարարում ուսումնական հաստատությունը.

Արդի պետական քաղաքականության, ինչպես նաև հասարակական գիտակցության մեջ կրթությունը, հատկապես որակյալ կրթությունը և դաստիարակությունը շարունակում են մնալ գերակայություններ՝ որպես ազգային արժեքներ և սոցիալ-տնտեսական առաջընթացի կարևոր գործոններ:

Կրթության բնագավառի գերխնդիրն է կրթության որակի բարձրացումը՝ ապահովելով համակարգի արդյունավետ գործունեությունը և յուրաքանչյուր սովորողի ձգտումներին և ընդունակություններին համապատասխան կրթություն ստանալու հավասար հնարավորության ապահովումը:

Դպրոցի զարգացման ծրագիրը մշակելիս առաջին հերթին անհրաժեշտ է ձևակերպել և հստակեցնել նրա առաքելությունը: Միայն դրանից հետո կարելի է որոշել հաստատության նպատակներն ու խնդիրները:

*Առաքելությունը հաստատության ցանկալի ապագայի մտապատկերն է*: առաքելությունն այն է, ինչի իրականացմանը ձգտում է տվյալ դպրոցը: Կրթական հաստատության առաքելությունը արտահայտում է նրա տեսլականը: Այստեղ ընդհանրական ձևով ներկայացվում են այն արդյունքները, որին դպրոցը ձգտում է հասնել:

Դպրոցի առաքելությունը չի կարող ներկայացվել որպես բարի ցանկություն: Այն պահանջում է նախնական լուրջ հետազոտական աշխատանք: Անհրաժեշտ է մանրամասն վերլուծել և վերհանել այն արտաքին և ներքին գործոնները, որոնք էական ազդեցություն ունեն առաքելության իրականացման վրա:

*Արտաքին գործոնների* թվին են պատկանում պետության կրթական քաղաքականության առանձնահատկությունները, պոտենցիալ շահառուների կրթական կարիքները, տեղական առանձնահատկությունները և այլն: *Ներքին գործոններից են* դպրոցի ավանդույթները, մանկավարժական կոլեկտիվի փորձը, դպրոցի առկա ռեսուրսները և այլն:

«Կրթության մասին» ՀՀ օրենքը սահմանում է. «*Կրթությունը անձի, հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց է, որը նպատակաուղղված է գիտելիքները պահպանելու և սերունդներին փոխանցելու համար*»:

Դպրոցի առաքելությունը հանդիսանում է այս գործընթացի արդյունավետ ապահովումը:

Մեր 140-ամյա կրթօջախը






Շվանիձորի միջնակարգ դպրոցի 2023-2028 թթ. Զարգացման ծրագրի հիմքում ընկած է *մրցունակ դպրոց* ձևավորելու տեսլականը, որը կապահովի յուրաքանչյուր սովորողի (այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող) համար որակյալ կրթություն: Այն կապահովի նաև ըստ կրթական աստիճանների ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքներն ու կարողունակությունները՝ հանրակրթության պետական չափորոշչի պահանջներին համապատասխան:

Հաստատության գործունեության հիմքում ընկած է սովորողի հայեցի, հոգևոր և մտավոր ներուժի ձևավորումն ու ամրապնդումը, ազգային և համամարդկային արժեքների պահպանումը և գիտելիքների, հմտությունների և կարողունակությունների անհրաժեշտ մակարդակի ապահովումը:

Մրցունակ դպրոցի ձևավորման համար անհրաժեշտ է կրթության մատչելիության ապահովումը, յուրաքանչյուր սովորողի կրթական կարիքներին համահունչ այնպիսի միջավայրի ձևավորումը, որով յուրաքանչյուր սովորող որոշակի ոլորտում կարող է ինքնահաստատվել և դառնալ հաջողակ:

Ուսումնական հաստատության գործունեության հիմքում ընկած է որակյալ, մատչելի տարրական, հիմնական և միջնակարգ կրթության ապահովումը: Այն միտված է նաև կրթության շարունակելությանը՝ ապահովելով հիմնական և միջնակարգ ծրագրի շրջանավարտների հետդպրոցական (նախնական մասնագիտական /արհեստագործական/, միջնակարգ-մասնագիտական և բարձրագույն) կրթություն ստանալու հնարավորությունը:

## Ուսումնական հաստատության կրթական կարիքների բավարարումը ամբողջացվում և ներկայացվում են հետևյալ ուղղություններով.

*Ուսումնական հաստատության գործունեությունը* հիմնվում է ժողովրդավարության, մարդասիրության, հանրամատչելիության, թափանցիկության, անձի ազատ զարգացման, ինքնավարության և կրթության աշխարհիկ բնույթի պահպանման, ինչպես նաև ազգային և համամարդկային արժեքների զուգորդման սկզբունքների վրա:

*Ուսումնական հաստատության տեսլականն է* քաղաքակիրթ, ստեղծագործ և ստեղծարար, նախաձեռնող, կարողունակ և մրցունակ, ժամանակին համահունչ քայլող սերունդի ձևավորումը, որն իր մեջ կկրի հայրենասեր ու պետականամետ քաղաքացու բարձրագույն, ինչպես նաև համամարդկային հիմնարար արժեքները:

*Ուսումնական հաստատության գործունեության նպատակը* յուրաքանչյուր երեխայի, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ), զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշչով սահմանված արդյունքների ապահովումն է:

Շվանիձորի միջնակարգ դպրոցի գործունեությունն ուղղված է սովորողների ընդհանուր և հատուկ կրթական կարիքների բավարարմանը, որն էլ իրականացվում է տարբեր ուղղություններով՝ ըստ կրթական մակարդակների.

- *հաստատության կառավարումն* ուղղված է սովորողների կրթական կարիքների բացահայտմանն ու նկարագրմանը, դրանց բավարարմանն ուղղված գործողությունների մշակմանն ու արդյունավետ իրագործմանը,
- *ուսումնադաստիարակչական աշխատանքները* հանդիսանում են սովորողների կրթական կարիքների բավարարման բուն գործընթացները, իրականացվում են ուսուցչամանկավարժական անձնակազմի կողմից՝ ընդգրկելով ինչպես բուն ուսումնական և դաստիարակության գործընթացները, այնպես էլ դպրոցական և արտադպրոցական տարաբնույթ աշխատանքներն ու միջոցառումները,
- *վարչատնտեսական գործունեությունը* պլանավորվում է դպրոցի հնարավորությունների օբյեկտիվ գնահատման արդյունքում. այն ուղղված է ուսումնական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ միջավայրի ապահովմանն ու զարգացմանը,
- *ԿԱՊԿՈՒ սովորողների հետ աշխատանքներն* իրականացվում են դպրոցի մանկավարժների, ուսուցչի օգնականի և ծնողների գործուն ներգրավվածությամբ, Սյունիքի մարզի տարածքային մանկավարժա-հոգեբանական աջակցության կենտրոնի հետ համագործակցությամբ:



## 1.2. Ուսումնական հաստատությունը և պետության կրթական քաղաքականության միտումները, համայնքի, շահառու խմբերի կարիքներն ու հնարավորությունները.

Ուսումնական հաստատության գործունեությունը կարգավորվում է հանրակրթության ոլորտում ՀՀ օրենսդրությամբ և արտացոլում է պետության կրթական քաղաքականության միտումները՝ ձևավորելով պետության ու համայնքի զարգացմամբ մտահոգ ու նախաձեռնողական սերունդ:

Զարգացման ծրագրի՝ համայնքի և շահառու խմբերի կարիքներին համապատասխանությունն ապահովելու նպատակով իրականացվել են հանդիպումներ հաստատության մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհուրդների հետ: Անցկացված քննարկումների արդյունքում վեր են հանվել նրանց կարիքները, հաշվի են առնվել յուրաքանչյուր կողմի առաջարկներն ու մոտեցումները: Հատկանշական է, որ Զարգացման ծրագրի արդյունավետության ապահովման համար նրա իրականացման բոլոր անհրաժեշտ օղակներում ներառված են շահառու խմբերի, համայնքի և գյուղի կարիքները: Ըստ որում, Զարգացման ծրագիրը նպատակադրում է ապահովել բոլոր այն միջոցառումների շարունակականությունը, որոնք նախատեսված են դպրոցի տարեկան աշխատանքային պլաններով:

- Ուսումնական հաստատությունը համագործակցում է պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև քաղաքացիական հասարակության հետ: Դպրոցն ակտիվորեն համագործակցում է Սյունիքի մարզպետարանի, ԿԳՄՍ-ի, ԳԹԿ-ի, ԿՏԱԿ-ի, ԿԶՆԱԿ-ի, համայնքապետարանի, ինչպես նաև համայնքում տեղակայված մի շարք պետական մարմինների ստորաբաժանումների հետ, այդ թվում՝ ոստիկանություն, ՊՆ և ԱԻՆ բաժիններ, կրթական, առողջապահական և բնապահպանական կազմակերպություններ և այլն:
- Դպրոցն ակտիվ համագործակցում է նաև մի շարք հասարակական կազմակերպությունների հետ, որոնցից հատկանշական է «Թաքնված Ճանապարհ նախաձեռնություն» ՀԿ-ի հետ ունեցած երկարամյա համագործակցությունը:
- Դպրոցը ներգրավված է «Դասավանդի՛ր, Հայաստան» կազմակերպության կրթական ծրագրերում. 2022-2023 ուսումնական տարում դպրոցում աշխատում են կազմակերպության երկու առաջնորդ ուսուցիչներ: 2023-2024 ուսումնական տարում դպրոցում կաշխատի կազմակերպության ևս մեկ ուսուցիչ:
- Դպրոցը մշտապես համագործակցում է համայնքի մարզամշակութային կազմակերպությունների հետ, որոնցից կարելի է առանձնացնել Մեղրիի մարզամշակութային կենտրոնը և Հենրիկ Իգիթյանի անվան Գեղագիտության ազգային կենտրոնի Մեղրու մասնաճյուղը:

Հատկանշական է, որ նշված կառույցների և կազմակերպությունների, համայնքի և ուսումնական հաստատության միջև առկա համագործակցությունը դրսևորվում է ամենատարբեր ոլորտներում: Շարունակաբար կազմակերպվում են տարաբնույթ միջոցառումներ, հանդիպումներ, մրցույթներ, ճանաչողական էքսկուրսիաներ, թեմատիկ և գործնական վարժանքներ, որոնք նպաստում են սովորողների սոցիալականացմանը, քաղաքացիական պատասխանատվության և ընդհանուր կարողունակությունների զարգացմանը: Սովորողների շրջանում հայրենաճանաչման գիտակցության բարձրացման հետ նաև պատասխանատու վերաբերմունք է ձևավորվում համայնքի և պետության նկատմամբ :

## 1.3. Ուսումնական հաստատության ենթակառուցվածքները, մարդկային ռեսուրսները և հնարավորությունները.

Համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011 թ. մայիսի 30-ի № 617 Ա/Ք հրամանով տրված լիցենզիաների՝ Շվանիձորի միջնակարգ դպրոցը իրավունք ունի իրականացնելու տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթական ծրագրեր՝ աշակերտների հետևյալ սահմանաչափերով.

Դպրոցի կողմից իրականացվող ընդհանուր կրթական ծրագրերը.



**40 սահմանային տեղ**

Տարրական ընդհանուր կրթական



**50 սահմանային տեղ**

Հիմնական ընդհանուր կրթական



**30 սահմանային տեղ**

Միջնակարգ ընդհանուր կրթական

Դպրոցի ներկայիս շենքը կառուցվել է 1975 թ.: Դպրոցն ունի մեկ ուսումնական մասնաշենք, մեկ մարզադահլիճ, երկհարկանի է, տիպային՝ 120 աշակերտ նախագծային հզորությամբ և հարմարեցված կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների պահանջներին: Դպրոցը հիմնանորոգվել է 2008 թվականին:

2022-2023 ուստարում դպրոցում կոմպլեկտավորվել է 6,5 դասարան՝ 33 աշակերտով, որից.

| | Տարրական դպրոց | Հիմնական դպրոց | Ավագ դպրոց | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| 2018-2019 ուստարի | 13 | 14 | 10 | 37 |
| 2019-2020 ուստարի | 10 | 15 | 10 | 35 |
| 2020-2021 ուստարի | 12 | 15 | 8 | 35 |
| 2021-2022 ուստարի | 13 | 15 | 7 | 35 |
| 2022-2023 ուստարի | 10 | 13 | 10 | 33 |

Դպրոցի աշակերտների թիվը 2018-2023 թթ.

2023-2024 ուստարում դպրոցում կկոմպլեկտավորվի 7,5 դասարան՝ 38 աշակերտով:

Դպրոցն աշխատում է միահերթ՝ 5-օրյա աշխատանքային շաբաթով:

Դպրոցը պատկանում է մարզային ենթակայության:

2022-2023 ուստարում դպրոցը չի ունեցել ԿԱՊԿՈՒ աշակերտներ: Դպրոցում այլազգի և ազգային փոքրամասնություններին պատկանող սովորողներ չկան:

2022-2023 ուստարում դպրոցն ունի 28 աշխատող՝ 20 մանկավարժական և 8 ուսումնաօժանդակ անձնակազմի անդամներով:



<u>Ուսումնական հաստատությունը սովորողների համար ապահովում է հետևյալ հնարավորությունները.</u>

- *որակյալ և ժամանակակից կրթություն,*
- *անձի ինքնադրսևորման, ինքնաարտահայտման ու ինքնազարգացման նպաստավոր միջավայր,*
- *մարզամշակութային կյանքի ներգրավվածություն,*
- *մասնագիտական կողմնորոշում ձևավորող միջավայր:*

2023-2024 ուստարուց Շվանիձորի միջնակարգ դպրոցի 5-րդ և 7-րդ դասարանների (դպրոցում 2-րդ և 10-րդ դասարաններ առկա չեն) ուսումնական պլանը կազմվելու է ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 4-ի N 136-Ն որոշմամբ նոր խմբագրությամբ շարադրված *<u>հանրակրթության պետական չափորոշչի համաձայն</u>*. ուսուցիչներն անցել են համապատասխան վերապատրաստման դասընթացներ:

Դպրոցի 2023-2028 թթ Զարգացման ծրագիրը կազմվել է համապատասխան հաստատության հնարավորությունների և ռեսուրսների: Հաշվի են առնվել դպրոցի ենթակառուցվածքների (դահլիճներ, լաբորատորիաներ, առարկայական կաբինետներ, ճաշարան և այլն) ապահովվածությունը, մարդկային ռեսուրսների (կառավարման մեխանիզմները, մանկավարժական կադրերի պատրաստվածություն, սովորողների նախասիրություններ և ձգտումներ) ներուժը, ընդհանուր ուսումնական միջավայրը: Ընդ որում, հնարավորությունների վերլուծության իրականացման ընթացքում ուսումնասիրվել են հաստատության առկա ռեսուրսները և, հնարավոր ռիսկերի նվազեցման համար ուսումնասիրության մեջ ներառված չեն բոլոր այն նոր հնարավորությունները, որոնց իրականացումը նախատեսված է Զարգացման ծրագրով:

Հաստատության հնարավորությունների ընթացիկ զարգացմանը համընթաց կձևավորվեն դպրոցի տարեկան աշխատանքային պլանները, որոնց համակարգված իրականացումն էլ կհանգեցնի ծրագրի արդյունավետության բարձրացմանը:

Դպրոցում մանկավարժական աշխատողների և սովորողների փոխհարաբերությունները հիմնված են փոխադարձ գործակցության և հարգանքի վրա. ուսուցիչների և դասղեկների հետևողական աշխատանքների շնորհիվ ձևավորված է բարենպաստ միջավայր: Ուսումնադաստիարակչական աշխատանքներում մշտապես ապահովված են սովորողի մտքի և խղճի ազատությունը, պատշաճ ուշադրություն է դարձվում նրանց ձգտումներին և ազատ կամարտահայտությանը:

Իրավապահ մարմինների ներկայացուցիչների, տնօրենի ՄԿԱ գծով տեղակալի, խորհրդակցական մարմինների անդամների, ուսուցչի օգնականի և դասղեկների կողմից հետևողական աշխատանքներ են տարվում սովորողների իրավունքների և պարտականությունների ներկայացման և արդյունավետ իրացման ուղղությամբ:

Դպրոցում կազմակերպվում են առանձին հանդիպում-քննարկումներ, որոնց շրջանակներում հատուկ ուշադրություն է դարձվում *հալածանքի (այդ թվում՝ մեդիայի միջոցով),* օտարման և բռնության դրսևորումների բացառմանը, դպրոցում բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի պահպանմանը:

# 2. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ, ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ.

## 2.1.Հաստատության բնութագիրը.

Դպրոցի ներկայիս շենքը կառուցվել է 1975 թ.: Դպրոցն ունի մեկ ուսումնական մասնաշենք, մեկ մարզադահլիճ, երկհարկանի է, տիպային՝ նախատեսված 120 աշակերտի համար:

Դպրոցը հիմնանորոգվել է 2008 թվականին:



**Ուսումնական հաստատության շենքի և տարածքի հատակագիծ-սխեման.**

*Շենքի մակերեսը* - 945,5 քառ. մետր,
*Շենքի ծավալը* - 5862,1 խոր. մետր,
*Հողամասի մակերեսը* - 0,3735 հա,
*Հասցեն* - ՀՀ Սյունիքի մարզ, Մեղրի համայնք, գյուղ Շվանիձոր, 1-ին փողոց, 3-րդ փակուղի, թիվ 4:




Ուսումնական հաստատության շենքն ունի 12 դասասենյակներ, (դրանց թվում ներառված են 2 առարկայական դասասենյակներ՝ ՆԶՊ-ի և Տեխնոլոգիայի, 2 լաբորատորիա՝ Արմաթ ինժեներական և բնագիտական), ուսուցչանոց, տնօրենի առանձնասենյակ, նիստերի և խորհրդակցությունների (նաև՝ աշակերտական) սենյակ, համակարգչային սենյակ՝ հեռավար ուսուցման սարքավորումներով, գրադարան, զենքի պահոց, մարզադահլիճ՝ 2 հանդերձարանով, ճաշարան՝ սննդի պահեստով, 4 սանհանգույց, տնտեսական սենյակ:

Դպրոցի ջեռուցումն էլեկտրական է՝ ըստ դասասենյակների և կաբինետների: Ուսումնական հաստատությունն ապահովված է կենտրոնացված ջրամատակարարման և անհատական ջրահեռացման համակարգերով: Դպրոցի ամբողջ բակային տարածքը և մարզադաշտը ապահովված են լուսավորությամբ:

Դպրոցն ապահովված է ինտերնետ կապով:

Դպրոցը ներառվել է ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի «Դպրոցական սնունդ» ծրագրում և 2022 թ-ի հունվարից իրականացնում է տաք սննդի տրամադրում: Հատկանշական է, որ դպրոցում տաք սննդի ծրագիրը կազմակերպվում է նաև հիմնական դպրոցի 5-6-րդ դասարանների աշակերտների համար: Ճաշարանը վերանորոգված է, ապահովված անհրաժեշտ գույքով, սարքավորումներով և պարագաներով:

Վերջին տարիներին ընդլայնվել են նաև մեր դպրոցի սովորողների ժամանակակից կրթություն ստանալու հնարավորությունները: Դպրոցը ապահովված է հեռավար կրթության սարքավորումներով կահավորված 2 դասասենյակներով:

Արդեն 2022 թ-ի հոկտեմբերից դպրոցում ձևավորվել և գործում են «Կարի», «Կերպարվեստի» և «Տեխնոլոգիայի» ուսումնական խմբակները. նոր ուսումնական տարուց կգործեն ևս երկու՝ «Առողջ ապրելակերպի» և «Մասնագիտական կողմնորոշման» խմբակները, 7-12-րդ դասարաններում կներդրվի նախագծային ուսուցում:

Արվեստի և տեխնոլոգիայի ուսումնական խմբակի շրջանակներում դպրոցում իրականացվում են կերպարվեստի, ասեղնագործության, մանրանկարչության և կարպետագործության խմբերի պարապմունքները: Ուսումնական հաստատությունը մեծ առաջընթաց ունի նաև արտադպրոցական կրթության տարբեր ոլորտներում. հաստատության աշակերտները հաճախում են ռոբոտաշինության, սպորտի, գեղարվեստի, կերպարվեստի և պարի արտադպրոցական պարապմունքների:



## Հաստատության շենքայի պայմանների կարիքի վերլուծությունը.

Շենքի և ենթակառուցվածքների պայմանների բարելավման համար անհրաժեշտ է.

- *Ընդհանուր կոսմետիկ վերանորոգում,*
- *Ներքին դռների նորացում,*
- *էլեկտրական հոսանքի բաշխման ներքին ցանցի վերանորոգում,*
- *Լոկալ ջեռուցման համակարգի անցկացում:*

## 2.2. Հաստատության ուժեղ և թույլ կողմերը, հնարավորությունների վերլուծություն.

Դպրոցի զարգացման ծրագրում իրատեսական նպատակներ և խնդիրներ սահմանելու համար նախ անհրաժեշտ է վերլուծել առկա իրավիճակը, բացահայտել ուժեղ և թույլ կողմերը, վերհանել առկա հիմնախնդիրները:

Երբեմն դժվար է կողմնորոշվել դպրոցի ուժեղ և թույլ կողմերը որոշելիս: Ըստ այդմ՝ Զարգացման ծրագրում նախ ներկայացված են դպրոցի հաջողությունները համակարգված կերպով՝ հաշվի առնելով որոշակի չափանիշներ: Միևնույն ժամանակ պետք է ընդունել, որ դպրոցի ուժեղ և թույլ կողմերը տարբեր գործոնների համադրման արդյունք են, բայց եթե դժվարանում ենք սահմանել այդ գործոնները, ապա գնահատումը չի տալիս իրական պատկեր, և նման գնահատման հիման վրա կատարված պլանավորումը չի նպաստում դպրոցի զարգացմանը:

Ակնհայտ է, որ վերջին տարիների ընթացքում իրականացված բարեփոխումները հնարավորություն են ստեղծել լուծել դպրոցում առկա մի շարք խնդիրներ: Դպրոցն ունեցել է այնպիսի ձեռքբերումներ, որոնց շնորհիվ էական առաջնթաց է գրանցել կրթադաստիարակչական գործընթացի ամենատարբեր ուղղություններում:

Դպրոցի շենքը բարեկարգ վիճակում է, շենքային պայմանները գտնվում են լավ վիճակում: Դպրոցը հիմնականում ապահովված է աշակերտական գույքով: Առարկայական դասարանները, մարզադահլիճն ու մյուս ենթակառուցվածքները գտնվում են լավ վիճակում և ապահովում են ուսումնական գործընթացի բնականոն ընթացքը: Միջին և ավագ խմբերի դասասենյակները, տեխնոլոգիայի և համակարգչային դասասենյակները, Արմաթ ինժեներական լաբորատորիան, նիստերի և խորհրդակցությունների սենյակը կահավորված են ժամանակակից գույքով և պարագաներով:

Դպրոցը հագեցած է կրթական ծրագրեր իրականացնելու համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով, որը շարունակաբար ավելացվում և նորացվում է: Վերջին տարիներին այն համալրվել է նաև համակարգչային սարքավորումներով և պարագաներով, այդ թվում՝ համակարգիչներ, դյուրակիր համակարգիչներ (նոթբուք), լուսացրիչներ (պրոյեկտոր), պլանշետներ, տպիչ սարքեր և այլն

Դպրոցն ապահովված է ինտերնետ կապով. առանձին գործող համացանցի երկու գծերով ապահովվում է շուրջ 90 % հասանելիություն: Դպրոցն հագեցած է համակարգչային անհրաժեշտ տեխնիկայով, դպրոցում առկա է հեռավար ուսուցման սարքավորումներով կահավորված երկու դասասենյակ:

Կարևոր է ընդգծել, որ առկա նյութատեխնիկական բազան հիմնականում նոր է, գտնվում է սարքին վիճակում, այն մշտապես հասանելի է հաստատության բոլոր շահառու խմբերին, այդ թվում՝ մանկավարժական աշխատողներ, ուսուցիչներ և սովորողներ:

| Համակարգչային և հարակից սարքավորումներ | | |
|---|---|---|
|  | Համակարգիչ - 3 հատ | Տեղադրված են վարչական աշխատասենյակում, ուսուցչանոցում և համակարգչային դասասենյակում |
|  | Նոթբուք - 16 հատ | Տեղադրված են ուսուցչանոցում, առանձին կաբինետներում, համակարգչային դասասենյակում |
|  | Լաբորատոր հավաքածու «Արմաթ» | Տեղադրված են «Արմաթ» ինժեներական լաբորատորիայում |
|  | Բազմաֆունկցիոնալ տպիչ սարք – 5 հատ, որից մեկը՝ գունավոր | Տեղադրված են վարչական աշխատասենյակում, ուսուցչանոցում, համակարգչային դասասենյակում |
|  | Պլանշետ – 8 հատ | Պահվում են ուսուցչանոցում և դասասենյակներում՝ ըստ անհրաժեշտության կիրառելու համար |

| | | |
|---|---|---|
|  | Լուսացրիչ – 3 հատ | Տեղադրված են հեռավար ուսուցման 2 դասասենյակներում և համակարգչային դասասենյակում |
|  | Լուսացրիչի էկրան – 2 հատ | Տեղադրված են հեռավար ուսուցման 2 դասասենյակներում |
|  | Երաժշտական համակարգ – 1 հավաքածու | Օգտագործվում է ըստ անհրաժեշտության՝ միջոցառումների ընթացքում |

| Մարզական գույք և պարագաներ | | |
|---|---|---|
|  | Մարզական հավաքածու – 2 հատ | Մարզադահլիճը հագեցած է համապատասխան մարզագույքով, որի հիմնական մասը նոր է: Մարզագույքը օգտագործվում է ֆիզկուլտուրայի դասաժամերին, մարզական մրցույթների և միջոցառումների ընթացքում: |
|  | Սեղանի թենիս - 2 հատ | |
|  | Հանտելների հավաքածու – 1 հատ | |
|  | Բակային մարզասարքեր – 2 հատ | |
|  | Մարզատանձիկ – 2 հատ, մարզական օղակ – 1 զույգ | |

| Խոհանոցային և հարակից պարագաներ | | |
|---|---|---|
|  | Խոհանոցային հավաքածու - 1 հատ | Ճաշարանը հիմնանորոգված է՝ կահավորված խոհանոցով և սննդի պահեստով: Խոհանոցը ապահովված է անհրաժեշտ գույքով, սարքավորումներով և պարագաներով: Այստեղ իրականացվում է տարրական դասարանների տաք սննդի տրամադրումը /սկսած 2022-2023 ուստարվանից տաք սնունդ տրամադրվում է նաև հիմնական դպրոցի 5-րդ և 6-րդ դասարանների սովորողներին/ : |
|  | Օդակլանիչ սարք - 1 հատ | |
|  | Ջրի դիսպանսեր – 2 հատ | |

Դպրոցում մշտապես կարևորվում է ժամանակակից կրթական մեթոդներով հագեցած արդյունավետ դասապրոցեսի կազմակերպումը, ուստի դպրոցի հնարավորությունները զարգացնելու նպատակով շարունակաբար ձեռք են բերվում ուսումնատեխնիկական անհրաժեշտ միջոցներ: Հաշվի առնելով ինտերակտիվ դասերի և հեռավար ուսուցման կազմակերպման պահանջարկի ավելացումը՝ 2022-2023 ուսումնական տարում դպրոցում կահավորվել է երկրորդ հեռավար ուսուցման կաբինետը (արվեստի դասասենյակ), որը հնարավորություն է տալիս կազմակերպելու հեռավար հանդիպումներ, առցանց էքսկուրսիաներ և միջոցառումներ:



## Հաստատության նյութատեխնիկական բազայի կարիքի վերլուծություն

Նյութատեխնիկական բազայի համալրման համար անհրաժեշտ է.

- *Տարրական դասասենյակների նոր գույքի և պարագաների համալրում,*
- *Բնագիտական լաբորատորիայի կահավորում և վերազինում,*
- *Ուսումնատեխնիկական միջոցների ձեռքբերում, այդ թվում՝*
  - *էլեկտրոնային գրատախտակ - 2 հատ,*
  - *համակարգիչ – 2 հատ,*
  - *բազմաֆունկցիոնալ տպիչ սարք* – 1 հատ:

Դպրոցի ներքին տեսքը









Դպրոցն ապահովված է մշտական ջրամատակարարմամբ, որը սակայն ամառային ջրասակավ շրջափուլում գործում է պարբերական ժամանակացույցով: 2023 թ-ից դպրոցում գործարկվում է անհատական ջրամատակարարման ապահովման մեխանիկական համակարգ:

Դպրոցական շենքում գործում է առանձնացված և կահավորված 4 սանհանգույց՝ յուրաքանչյուր հարկում երկուական:

— — — — —

Վերջին տարիներին մեծ ուշադրություն է դարձվել սովորողների մարզական դաստիարակությանը. դպրոցի բակային տարածքում կառուցվել է համալիր մարզադաշտ, որի կահավորումը դեռևս ընթացքի մեջ է: Մարզադաշտը նախատեսված է ոչ միայն հաստատության ֆիզկուլտուրայի դասաժամերի արդյունավետ իրականացման, այլև ռազմամարզական տարաբնույթ միջոցառումների, գործնական վարժանքների և մրցույթների կազմակերպման համար:

Մեծ ուշադրություն է դարձվում նաև սովորողների բնապահպանական և աշխատանքային դաստիարակությանը: Այս տարվա ամառային արձակուրդին ընդառաջ դպրոցի շենքի երկայնքով կառուցվել են առանձնացված և ցանկապատված կանաչ գոտիներ՝ ծաղկանոցներ, որոնց ամենօրյա խնամքի աշխատանքներում կամավոր ձևով ներգրավված են նաև դպրոցի սովորողները և ուսուցիչները:

## ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԱՐԶԱԴԱՇՏԸ







## ՄԵՐ ՃԱՇԱՐԱՆԸ





<u>Ուսումնական հաստատության  կառավարման և խորհրդակցական մարմինները</u>.

Կազմակերպության <u>կանոնադրության 75-րդ կետով ամրագրված է.</u>
«Հանրակրթական դպրոցում կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման, ինչպես նաև զարգացման ծրագրերին աջակցելու և համայնքի  հետ արդյունավետ համագործակցություն ապահովելու նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ *մանկավարժական խորհուրդ, առարկայական մեթոդական միավորումներ, ծնողական, աշակերտական, շրջանավարտների, հոգաբարձուների խորհուրդներ*: Հանրակրթական դպրոցում կարող են ձևավորվել խորհրդակցական կամ խորհրդատվական այլ մարմիններ»:

«Շվանիձորի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման գործում ներգրավված են կառավարման և խորհրդակցական հետևյալ մարմինները, որոնք գործում են օրենսդրությամբ և ուսումնական հաստատության Կանոնադրությամբ՝ իրենց իրավասությունների սահմաններում.

- ✓ *Կառավարման խորհուրդ,*
- ✓ *Մանկավարժական խորհուրդ,*
- ✓ *Ծնողական խորհուրդ,*
- ✓ *Աշակերտական խորհուրդ:*

*Դպրոցում ձևավորված է երկու  մեթոդական մասնախումբ՝ հումանիտար և առարկայական (բնագիտամաթեմատիկական և ընդհանուր):*

*Կառավարման և խորհրդակցական մարմինները ձևավորվում են ըստ կանոնադրության և օրենքով սահմանված կարգերի:*



*Հաստատության Կոլեգիալ կառավարման մարմինը՝ Կառավարման խորհուրդը կազմված է 14 անդամից, այն ձևավորվել է որպես Միացյալ խորհուրդ (Շվանիձորի և Նռնաձորի միջնակարգ դպրոցների), որը գործում է 2021 թ-ից:*



*Հաստատության Մանկավարժական խորհուրդը ձևավորվել է ըստ սահմանված կարգի. 2022-2023 ուսումնական տարում այն կազմված է 18 անդամից:*



*Հաստատության Ծնողական խորհուրդը ձևավորվել է ըստ սահմանված կարգի. 2022-2023 ուսումնական տարում այն կազմված է 8 անդամից:*



*Հաստատության Աշակերտական խորհուրդը ձևավորվել է ըստ սահմանված կարգի. 2022-20232 ուսումնական տարում այն կազմված է 8 անդամից:*

Բոլոր խորհրդակցական մարմիններն ունեն իրենց կանոնադրությունները, որոնք կազմված են օրինակելի կանոնադրությունների հիմքով: Կանոնադրությամբ սահմանվում են տվյալ մարմնի գործունեության ոլորտները և կարգը: Խորհուրդներն ունեն իրական ինքնավարություն, ազատ են իրենց գործողություններում՝ պահպանելով իրենց իրավունքներն ու գործունեության սկզբունքները: Խորհուրդները գործում են ըստ սահմանված կարգերի, նրանց գործունեությունը կազմակերպվում է համաձայն կանոնադրությունների և աշխատակարգերի:

*Դպրոցի կառավարման խորհուրդն* ակտիվորեն ներգրավված է Դպրոցի կառավարման գործում, ապահովված է կառավարման խորհուրդ-տնօրեն արդյունավետ համագործակցությունը:

Կառավարման խորհուրդը, հանդիսանալով երկու դպրոցների Միացյալ խորհուրդ, համաչափ գործունեություն է իրականացնում Շվանիձորի մ/դ և Նռնաձորի մ/դ հետ: Խորհրդի նիստերը անցկացվում են երկու հաստատություններում հավասարապես`ըստ հաջորդականության. անցկացման վայրի ընտրության համար հաշվի են առնվում քննարկվող հարցերի բնույթն ու բովանդակությունը, խորհրդի անդամների մասնակցության հնարավորությունը` կապված եղանակային պայմանների և տրանսպորտային երթուղիների հետ:

Խորհուրդն իրականացնում է տնօրենի գործունեության, դպրոցի զարգացման ծրագրի կատարման նկատմամբ վերահսկողություն և կանոնադրությամբ սահմանված այլ գործառույթներ:

Հատկանշական է, որ հանդիսանալով երկու դպրոցների կառավարման Միացյալ մարմին, Շվանիձորի մ/դ և Նռնաձորի մ/դ Միացյալ խորհուրդը սահմանված գործառույթների հետ մեկտեղ երկու դպրոցների միջև ձևավորել է փոխհամագործակցային արդյունավետ միջավայր: Այն դրսևորվում է կառավարման և խորհրդակցական բոլոր մարմինների համագործակցային աշխատանքով, ուսումնադաստիարակչական աշխատանքներում ձևավորված շփումներով, համատեղ ծրագրերի, միջոցառումների և տարաբնույթ աշխատանքների իրականացմամբ:

Կառավարման խորհրդի գործունեության հիմնական ուղղություններն են.

- աջակցում է ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարմանը, վերահսկում է զարգացման ծրագրի ժամանակացույցով սահմանված տարեկան գործողությունների իրականացումը, լսում է զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվությունը և տալիս եզրակացություն,
- հաստատում է դպրոցի կազմակերպական կառուցվածքը, ներքին կարգապահական, այդ թվում` աշխատողների և սովորողների վարքագծի կանոնները,
- քննարկում է ուսումնադաստիարակչական գործունեության, այդ թվում` մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների իրականացման մասին հաշվետվությունները,
- քննարկում է ներքին և արտաքին գնահատման արդյունքները:

Կառավարման խորհրդի նիստերի շրջանակներում Դպրոցի տնօրենը ներկայացրել, և խորհրդում քննարկվել են հետևյալ առանցքային հարցերը.

- *Ամենամյա ծախսերի նախահաշիվը, հաջորդ բյուջետային տարվա ֆինանսավորման հայտը, հաստիքային և տարիֆիկացիոն ցուցակները,*
- *Ֆինանսատնտեսական, ուսումնադաստիարակչական գործունեության, այդ թվում` մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների իրականացման մասին հաշվետվությունները,*
- *Արտաքին և ներքին գնահատման արդյունքները,*
- *Դպրոցի զարգացման ծրագրի կատարողականը:*

Կարևոր է ընդգծել, որ Զարգացման ծրագրով նախանշված ժամանակահատվածում (2023-2028թթ.) Դպրոցի տնօրեն-կառավարման խորհուրդ համագործակցությունն իրականացվելու է կողմերի փոփոխված լիազորությունների շրջանակներում` «Հանրակրթության մասին» ՀՀ նոր օրենքի համաձայն: Ըստ այդմ նախատեսվում է Զարգացման ծրագրի կատարումը Կառավարման խորհրդի աջակցությամբ և վերահսկողությամբ:




<u>Ուսումնական հաստատության համագործակցությունը.</u>

Ուսումնական հաստատության գործունեությունը արտացոլում է պետության կրթական քաղաքականության միտումները՝ ձևավորելով պետության ու համայնքի զարգացմամբ մտահոգ ու նախաձեռնողական սերունդ:

Զարգացման ծրագրի՝ համայնքի և շահառու խմբերի կարիքներին համապատասխանությունն ապահովելու նպատակով նրա մշակման փուլում իրականացվել են հանդիպումներ հաստատության մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհուրդների հետ. վեր են հանվել նրանց կարիքները, հաշվի են առնվել յուրաքանչյուր կողմի առաջարկներն ու մոտեցումները:

Հատկանշական է, որ Զարգացման ծրագրի արդյունավետության ապահովման համար նրա իրականացման տարբեր փուլերում ներառված են համագործակցային շարունակական աշխատանքներ կրթության կառավարման մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, ծնողական համայնքի և այլ շահառու խմբերի հետ: Լայն համագործակցության արդյունքում ընդլայնվում է դպրոցի և համայնքի միջև գործունեության շրջանակը, ամրապնդվում են կապերը համայնքում գործող կրթամշակութային հաստատությունների և պետական մարմինների առանձին ստորաբաժանումների հետ:

*Դպրոցը համագործակցում է.*



- պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև քաղաքացիական հասարակության հետ:
- ԿԳՄՍ-ի, Սյունիքի մարզպետարանի, ԳԹԿ-ի, ԿՏԱԿ-ի, ԿՁՆԱԿ-ի, համայնքապետարանի հետ,
- համայնքում տեղակայված պետական որոշ մարմինների ստորաբաժանումների հետ, այդ թվում՝ ոստիկանության, ՊՆ և ԱԻՆ բաժիններ,
- կրթական, առողջապահական և բնապահպանական կազմակերպությունների հետ,
- հասարակական մի խումբ կազմակերպությունների հետ, որոնցից հատկանշական է «Թաքնված ճանապարհի նախաձեռնություն» սփյուռքահայ կամավորների ՀԿ-ի հետ ունեցած երկարամյա համագործակցությունը,
- համայնքի մարզամշակութային կազմակերպությունների հետ, որոնցից կարելի է առանձնացնել Մեղրիի մարզամշակութային կենտրոնը և Հենրիկ Իգիթյանի անվան Գեղագիտության ազգային կենտրոնի Մեղրու մասնաճյուղը:
- Դպրոցը ներգրավված է «Դասավանդի՛ր, Հայաստան» կազմակերպության կրթական ծրագրերում. 2022-2023 ուսումնական տարում դպրոցում աշխատում են կազմակերպության երկու ուսուցիչ: Նոր ուսումնական տարում դպրոցում աշխատելու է կազմակերպության ևս մեկ առաջնորդ ուսուցիչ:



Հատկանշական է, որ նշված կառույցների և կազմակերպությունների, համայնքի և ուսումնական հաստատության միջև առկա համագործակցությունը դրսևորվում է ամենատարբեր ոլորտներում: Շարունակաբար կազմակերպվում են տարաբնույթ միջոցառումներ, հանդիպումներ, մրցույթներ, ճանաչողական էքսկուրսիաներ, թեմատիկ և գործնական վարժանքներ, որոնք նպաստում են սովորողների սոցիալականացմանը, քաղաքացիական պատասխանատվության և ընդհանուր կարողունակությունների զարգացմանը:

Վերջին տարիներին գնալով ընդլայնվում է դպրոցի և համայնքային մշակութային կազմակերպությունների համագործակցությունը: Արտադպրոցական կրթության շրջանակներում սովորողները հաճախում են Մեղրի քաղաքում գործող Հենրիկ Իգիթյանի անվան Գեղագիտության ազգային կենտրոնի Մեղրու կենտրոնում գործող պարի և կերպարվեստի խմբակներին (թվով 16 սովորողներ), քաղաք Ագարակում «Շոտոկան» կարատեի ֆեդերացիայի կողմից կազմակերպվող պարապմունքներին (թվով 12 սովորողներ):

Սկսած 2016 թ-ից՝ ամառային արձակուրդի շրջափուլում դպրոցում ամեն տարի կազմակերպվում է երկշաբաթյա «Ամառային ճամբար»: Այն ընդգրկում է դպրոցի սովորողներին և ուսուցիչներին, նախադպրոցական տարիքի երեխաներին, ուսանողներին, շրջանավարտներին (այդ թվում կամավոր սփյուռքահայ երիտասարդների) և ներառում է առողջապահության և հիգիենայի, բնապահպանության, արվեստի, մեդիագրագիտության, լուսանկարչության, սպորտի, առողջ ապրելակերպի դասընթացներ: Ճամբարը նպատակաուղղված է գյուղի երեխաների և սովորողների գիտելիքների, կարողունակությունների, գործնական հմտությունների զարգացմանը, նոր հարաբերությունների և շփումների խթանմանն ու ակտիվացմանը՝ ծառայելով որպես կամուրջ մեր բնակավայրի և ամբողջ աշխարհի հայ երիտասարդության միջև:

Սովորողները մշտապես մասնակցում են Զանգեզուր կենսոլորտային համալիրի «Արևիք» ազգային պարկի կողմից կազմակերպվող վրանային ճամբարներին:

Դպրոցի սոցիալապես անապահով և խոցելի խմբերի սովորողները մշտապես մասնակցում են Սյունիքի մարզպետարանի կողմից կազմակերպվող մանկական առողջարարական ճամբարներին:

Սովորողների շրջանում հայրենաճանաչման գիտակցության բարձրացման հետ ձևավորվում է նաև պատասխանատու վերաբերմունք համայնքի և պետության նկատմամբ: Դպրոցի գործունեությունը դառնում է առավել բաց և թափանցիկ, աշխատանքի արդյունքները հանրային են և տեսանելի:

Դպրոցի աշակերտական և մանկավարժական անձնակազմը ակտիվորեն ներգրավված է նաև պետական և համայնքային այնպիսի միջոցառումների, ինչպիսիք են համապետական և համայնքային շաբաթօրյակները, ծառատունկը, առանձին հանդիպումները և քննարկումները:

Դպրոցը մշտապես պլանավորում և իրականացնում է արտադպրոցական գործունեության տարաբնույթ աշխատանքներ, որոնք իրականացվում են ծնողական համայնքի ակտիվ ներգրավմամբ: Դրանք ներառում են ոչ միայն զուտ արտադպրոցական, ուսումնադաստիարակչական միջոցառումներ, այլև ներհամայնքային և ներմարզային համագործակցության առանձին ծրագրեր և աշխատանքներ:

2023-2024 ուստարուց սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքներում ընտանիքին համակողմանի օգնություն ցուցաբերելու, դասապատրաստումներին աջակցելու, ինքնուրույն սովորելու կարողությունները, ստեղծագործական ունակությունները զարգացնելու նպատակով նախատեսվում է դպրոցում կազմակերպել երկարօրյա ուսուցում՝ սովորողների և նրանց ծնողների կարիքների ուսումնասիրության հիման վրա:









*<u>Ուսումնական հաստատության մարդկային ռեսուրսները.</u>*

Ուսումնական հաստատությունն ունի 28 աշխատակից, որոնցից 20-ը մանկավարժական աշխատողներն են: Մանկավարժական աշխատողներից 3-ը ունեն միջին մասնագիտական, մնացածը բարձրագույն կրթություն՝ համապատասխան մասնագիտական որակավորմամբ: Բոլոր ուսուցիչները սահմանված կարգի համաձայն մշտապես անցնում են պարտադիր ատեստավորում:

2023-2024 ուստարում Շվանիձորի միջնակարգ դպրոցի 5-րդ և 7-րդ դասարանների (դպրոցում 2-րդ և 10-րդ դասարաններ առկա չեն) դասավանդող ուսուցիչները անցել են համապատասխան վերապատրաստման դասընթացներ՝ հանրակրթության պետական նոր չափորոշչով սահմանված պահանջների և դրույթների յուրացման համար:

Դպրոցում կամավոր ատեստավորում անցած ուսուցիչներ չկան. 2023 թ-ին բարձրագույն կրթություն չունեցող 3 ուսուցիչներն էլ հայտագրվել են կամավոր ատեստավորման համար:




# ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Հաստատության ուսուցիչներն ունեն անհրաժեշտ պատրաստվածություն, մասնագիտական զարգացվածություն, անհրաժեշտ կարողություններ և հմտություններ:

Մեծ է պատասխանատու ստորաբաժանումների ղեկավարների և ուսուցիչների մասնակցությունը կրթության կառավարման մարմինների, և առանձին կազմակերպությունների կողմից իրականացվող ընթացիկ ամենատարբեր վերապատրաստումներին, սեմինարներին և դասընթացներին:

Դպրոցում ապահովված է ուսուցչական անձնակազմի փոխհամագործակցության և ինքնակրթության համար անհրաժեշտ բարենպաստ միջավայր. ուսուցիչներն ապահոված են անհատական ուսումնատեխնիկական միջոցներով (նոթբուքեր և պլանշետներ):

Ուսումնադաստիարակչական գործընթացում ուսուցիչներն ապահովում են աշակերտակենտրոն մոտեցում՝ այն ներդաշնակորեն համադրելով ուսուցման արդի մեթոդների արդյունավետ կիրառման հետ:

Անձնակազմի արժևորման նպատակով շարունակաբար կիրառվում են խրախուսման տարբեր մեխանիզմներ, որոնք հիմնված են տարեկան աշխատանքային պլանով նախատեսված կատարողականի ընթացիկ և ամփոփիչ վերլուծությունների վրա, ներառում են ուսումնադաստիարակչական գործընթացի բոլոր օղակները, աշխատանքի ձևերը և ապահովում են գնահատման հուսալիության, թափանցիկության և հավաստիության սկզբունքները: Խրախուսանքի տարբեր մեթոդներ են կիրառվում նաև առանձին աշխատակիցների և նրանց սովորողների խմբի կողմից ընթացիկ ներդպրոցական և արտադպրոցական աշխատանքներում ունեցած հաջողությունների համար: Հաստատության մանկավարժները խրախուսվում են նաև հաստատության գործունեությանն առնչվող միջոցառումների, կրթական գործընթացի հետ կապված տոների և մասնագիտական օրվա առիթով:

Հաստատության 20 մանկավարժական աշխատողներից 7-ը երթևեկող ուսուցիչներ են, նրանց տրանսպորտային փոխադրումն իրականացվում է համայնքային տրանսպորտային երթևկության համակարգի կողմից՝ առանձին հարմարեցված գրաֆիկով. սահմանված կարգի համաձայն՝ դպրոցը կազմակերպում է երթևեկող մանկավարժների տրանսպորտային ծախսերի փոխհատուցում: Կարևոր է ընդգծել, որ վերոնշյալ գործընթացի կազմակերպումը հնարավորություն է ընձեռում ապահովելու հաստատությունը անհրաժեշտ մասնագիտական պատրաստվածությամբ մանկավարժական կադրերով, ինչն էլ դրական է անդրադառնում կրթության որակի վրա:

Հաստատության մանկավարժական համակազմում գերակշռում են միջին տարիքի անդամները: Զգալի տեղ են զբաղեցնում նաև երիտասարդ մասնագետները, ովքեր հանդիսանում են նորամուծությունների իրացմանը պատրաստ հիմնական խումբը: Դպրոցի մանկավարժներից չորսը կենսաթոշակային տարիքի են, ովքեր մշտապես կիսում են իրենց մասնագիտական փորձը և հմտությունները:




**ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԿԱԶՄԸ**

ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաները.

ՏՀՏ-ները ներկայումս ընդգրկված են հասարակական կյանքի բոլոր ոլորտներում, այդ թվում՝ կրթության բնագավառում և հանրակրթական դպրոցում: Մանկավարժական գիտության և կրթական նոր տեխնոլոգիաների զարգացումն ավելի է խթանում դասավանդման նոր մեթոդների, ուսուցման արդի ձևերի յուրացումն ու կիրառումը:

Հաստատությունը հագեցած է կրթական ծրագրեր իրականացնելու համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով և ՏՀՏ միջոցներով. այն մշտապես ավելացվում և նորացվում է: Դպրոցը շարունակաբար համալրվում է նաև համակարգչային սարքավորումներով և պարագաներով, այդ թվում՝ համակարգիչներ, դյուրակիր համակարգիչներ (նոթբուք), լուսացրիչներ (պրոյեկտոր), պլանշետներ, տպիչ սարքեր և այլն:

Դպրոցն ապահոված է ինտերնետ կապով. համացանցի երկու գծերով ապահովվում է շուրջ 90 % հասանելիություն: Դպրոցն հագեցած է համակարգչային անհրաժեշտ տեխնիկայով, դպրոցում գործում է Արմաթ ինժեներական լաբորատորիա, առկա է հեռավար ուսուցման սարքավորումներով կահավորված երկու դասասենյակ:

Կարևոր է ընդգծել, որ առկա նյութատեխնիկական բազան հիմնականում նոր է, գտնվում է սարքին վիճակում, *այն մշտապես հասանելի է հաստատության բոլոր շահառու խմբերին, այդ թվում՝ մանկավարժական աշխատողներ, ուսուցիչներ և սովորողներ.*

Դպրոցում ուսուցման գործընթացը հագեցած է դասավանդման փոխներգործուն, համագործակցային ուսուցման կազմակերպման տարբեր եղանակներով, հեռավար և ՏՀՏ-ով հագեցած ուսուցման ձևերով:

ՏՀՏ-ի ինտեգրումը ուսուցման գործընթացում բարձրացնում է դասի արդյունավետությունը. դրանց կիրառումը ուսուցումը դարձնում է ավելի հետաքրքիր և բովանդակալից, նպաստում է կրթության որակի բարձրացմանը:

**Դպրոցում կրթական ծրագրերի կազմակերպումը իրականացվում է ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաների ներգրավմամբ՝ հետևյալ առանցքային ուղղություններով.**



- *Հաստատության կառավարում, ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպում,*
- *Բուն ուսումնադաստիարակչական գործընթացի ապահովում,*
- *Համակազմի ՏՀՏ կարողությունների և հմտությունների կատարելագործման միջոցառումների անցկացում,*
- *Վարչատնտեսական և ֆինանսական գործունեության կազմակերպում, էլեկտրոնային գործավարության իրականացում:*

Դպրոցում շարունակաբար արդիականացվում է ուսումնական միջավայրը և ընդլայնվում են ՏՀՏ հնարավորությունները: Մանկավարժների ու սովորողների շրջանում կիրառվում են այնպիսի մեխանիզմներ, որոնք ձևավորում և զարգացնում են անհրաժեշտ կարողություններն ու հմտությունները:

ՏՀՏ միջոցների կարևորությունը մեծ է նաև հաստատության կառավարման, ուսումնադաստիարակչական գործունեության իրականացման և վարչատնտեսական աշխատանքների կազմակերպման առումով: Գնալով անցում է կատարվում էլեկտրոնային գործավարության, ինչը նախատեսում է դպրոցի ոչ միայն ուսումնամանկավարժական, այլև վարչատնտեսական անձնակազմի ՏՀՏ կիրառման կարողությունների շարունակական կատարելագործում:

Դպրոցում ՏՀՏ միջոցների կիրառումը կարևորվում է ոչ միայն ուսումնադաստիարակչական աշխատանքների բնականոն գործունեության ապահովման, այլև էլեկտրոնային-ծրագրային և առցանց փոխգործակցության արդյունավետության համար: Դպրոցն ակտիվ օգտվում և գործունեություն է ծավալում կրթական հետևյալ հարթակներում.

**ԿՏԱԿ /Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն ՊՈԱԿ/**. Կազմակերպության շնորհիվ իրականացվում է դպրոցում տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների ներդրումն ու դրա շարունակականությունը, կրթական տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների բնագավառի ծրագրերի կորդինացումը, ապահովվում է գործունեության մի շարք ոլորտների ծրագրային վարումը /սովորողների ընդունում, փոխադրում, տեղափոխում և ազատում, աշխատողների ընդունում և ազատում, տարիֆիկացիոն և հաստիքային ցուցակների ձևավորում, դասաբաշխում, էլեկտրոնային մատյանի վարում և այլն/, դպրոցների կայքէջերի ձևավորումը, գործարկումը և սպասարկումը:

**ԿԶՆԱԿ /Կրթության զարգացման և նորարությունների ազգային հիմնադրամ/.** Հիմնադրամի նպատակն է կրթության ոլորտի արդիականացումը: Նրա կողմից շարունակաբար մշակվում և հրապարակվում են էլեկտրոնային ուսումնական նյութեր և ծրագրային փաթեթներ:

**ՀԿՄ/Հայկական կրթական միջավայր/.** Ընդհանուր տեղեկատվություն է տրամադրում ՀՀ կրթական համակարգի գործունեության և իրականացվող ծրագրերի մասին: Ներկայացվում են գիտակրթական և մշակութային ձեռնարկների և միջոցառումների վերաբերյալ նյութեր, տեղադրվում են հայտարարություններ կազմակերպվող տարբեր մրցույթների, հանդիպումների, դասընթացների, թափուր աշխատատեղերի մասին:

**«Պաշարների շտեմարան».** կայքում՝ ըստ բաժինների մանկավարժների և սովորողների, կրթության ոլորտի մասնագետների համար տեղադրվում են ուսումնամեթոդական նյութեր /փորձարկվող դասագրքեր, ձեռնարկներ, թեմատիկ պլաններ և այլն/, ավարտական, պետական ավարտական և միասնական քննությունների փաստաթղթեր, առաջադրանքներ, դիմորդի տեղեկատուներ, առարկայական շտեմարաններ և այլ նյութեր:

**Microsoft Teams.** առցանց այս հարթակի միջոցով կազմակերպվում և անցկացվում են ուսումնական գործընթացի մաս կազմող մի շարք աշխատանքներ /հեռավար դասեր, առցանց վերապատրաստումներ, հանդիպումներ և քննարկումներ/:

**«Ուսուցման ինտերակտիվ տեխնոլոգիաներ»**. այս կայքից օգտվում ենք ԲՏՃՄ ոլորտի չորս առարկաների /ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, երկրաչափություն/ դպրոցական ծրագրին համապատասխանող նյութերից, որոնք ուսուցիչների և աշակերտների կողմից օգտագործվում են դասապրոցեսներին:

**Գնահատման և թեստավորման կենտրոն**. տեղադրվում են ավարտական և միասնական քննությունների արդյունքները, անհրաժեշտ հայտերը:

**Olymp.am**. տեղեկատվություն է տալիս դպրոցի շահառուներին մարզային, հանրապետական և միջազգային օլիմպիադաների ժամանակացույցի , արդյունքների մասին:

**Կրթության որակի վերլուծությունը.**

Կրթության որակը ներառում է բազմաթիվ բաղադրիչներ: Դրանցից առաջնահերթն ուսումնառության արդյունքներն են, որոնք պահանջված են սովորողների կողմից, և ապահովում են շրջանավարտների պատրաստվածությունը՝ ուսումը շարունակելու կրթության հաջորդ մակարդակում կամ անցնելու համապատասխան աշխատանքային գործունեության:

Որակյալ կրթությունը միտված է ապագային և ենթադրում է ոչ միայն գիտելիքների ուսուցանում և յուրացում, այլև նոր՝ գիտելիքաստեղծ գործունեություն: Այն որակյալ կրթության հիմքերից է, որը կարող է բերել գիտելիքահեն տնտեսության ձևավորմանը և ժողովրդավարական հասարակարգի զարգացմանը:

Դպրոցի առաջ խնդիր է դրված՝ բարձրացնելու սովորողների ուսման որակը, քանի որ վերջին տարիներին նրա դինամիկայի ընթացքը գոհացուցիչ չէ:




# ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՐԱԿԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ 2018-2022 թթ.

Դպրոցում երաշխավորված է երեխաների՝ կրթություն ստանալու հիմնարար իրավունքը: Դրան զուգահեռ կրթության որակի բարձրացման նպատակով շարունակաբար իրականացվում են հետևյալ աշխատանքները.

- Հետևողական աշխատանքներ են տարվում արդի կրթական մեթոդների և արդյունավետ տեխնոլոգիաների յուրացման և տեղայնացման ուղղությամբ՝ սովորողների պահանջմունքների բավարարման և ժամանակին համահունչ քայլելու նպատակով:

- Դպրոցում ապահովված է արտադասարանական խմբակների, լրացուցիչ կրթական ծառայությունների, ուսումնական լաբորատորիաների, մասնագիտական կողմնորոշմանն ուղղված աշխատանքների արդյունավետ գործունեությունը:
- Դպրոցը ըստ անհրաժեշտության կազմակերպում և իրականացնում է ուսուցման այլընտրանքային ձևեր, այդ թվում՝ տնային ուսուցում և հեռավար ուսուցում:
- Դպրոցը իրականացնում է ԿԱՊԿՈՒ սովորողներին մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրումը, ինչպես ուսումնական հաստատության, այնպես էլ տարածքային մակարդակներում, ապահովում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար ֆիզիկական միջավայրի կամ անհատական/խելամիտ հարմարեցումները:
- Որակյալ կրթության ապահովմանը զուգահեռ մշտապես մեծ ուշադրություն է դարձվում սովորողների գեղագիտական, հայրենաճանաչողական և ռազմահայրենասիրական դաստիարակությանը, համամարդկային արժեքների ամրապնդմանը, նրանց ստեղծագործական կարողությունների վերհանմանը և զարգացմանը:
- Աշխատանքներ են կատարվում ուսման որակը բարելավելու, սովորողների հմտությունները, կարողություններն ու դիրքորոշումները զարգացնելու ուղղությամբ:
- Հաստատությունում մշտադիտարկվում է սովորողների հետ անցկացվող ցանկացած պարապմունք:
- Մշտապես ուշադրության կենտրոնում են սովորողների առողջության պահպանումն և անվտանգության ապահովումը:
- Շարունակաբար կազմակերպվում են ներդպրոցական, արտադպրոցական, ներհամայնքային նպատակային միջոցառումներ, երկարօրյա էքսկուրսիաներ, այցելություններ մշակութային ժամանցի կենտրոններ, որոնց շնորհիվ սովորողների մոտ զարգանում են հայրենաճանաչողական հետաքրքրությունները, գեղագիտական որակները:
- Մշտապես անց են կացվում մարզամշակութային բազմաբնույթ միջոցառումներ. սովորողները ակտիվորեն մասնակցում են մանկապատանեկան և երիտասարդական մրցույթների, փառատոնների և ցուցահանդեսների: 2022-2023 ուսումնական տարում դպրոցի տեխնոլոգիայի և արվեստի խմբակը կազմակերպել և իրականացրել է հին հայկական ասեղնագործության և ժանյակագործության թեմայով 2 համայնքային ցուցահանդես, ակտիվորեն մասնակցել է Երևանում անցկացված 2 ցուցադրությունների:

  2021, 2022 և 2023 թվականներին դպրոցի տարրական դասարանների մարզական թիմը Համայնքային սպորտլանդիաներում գրավել է մրցանակային տեղեր:
- Շարունակաբար ներդրվում և կիրառվում են սովորողների ուսման առաջադիմության խթանման մեխանիզմներ. առաջադիմության աճ արձանագրած սովորողները ուսումնական տարվա ընթացքում առնվազն 2 անգամ դպրոցի կողմից արժանանում են պարգևների և շնորհակալագրերի:
- Դպրոցում տնօրենության (պատասխանատու ոլորտների ղեկավարների) կողմից խրախուսանքի բազմատիպ մեթոդներ են կիրառվում նաև ուսումնադաստիարակչական ընդհանուր աշխատանքներում դրական օրինակով հանդես եկած սովորողների (նաև՝ սովորողների խմբերի) նկատմամբ: Անցկացվող դպրոցական և արտադպրոցական ամենատարբեր աշխատանքներում լավագույն ցուցանիշներ դրսևորած սովորողները մշտապես խրախուսվում և պարգևատրվում են:

## Շվանիձորի միջնակարգ դպրոցի Զարգացման ծրագրով կրթության որակի ապահովման, բարձրացման, չափման համար նախատեսված են իրականացնել հետևյալ աշխատանքները, որոնք սկսած 2018 թ-ից մշտապես կատարվում են.

Կրթության որակի ապահովման և բարձրացման բուն ուսումնական աշխատանքներ.

- Դպրոցի ուսումնական պլանը կազմվում է օրինակելի ուսումնական պլանի հիման վրա՝ սահմանված կարգի համաձայն: Դպրոցական բաղադրիչով նախատեսված ժամաքանակը հատկացվում է ըստ կարգի. առանձնակի հաշվի են առնվում սովորողների նախասիրություններն ու կարիքները:
- Առարկայական չափորոշիչներին և ծրագրերին համապատասխան կազմվում են թեմատիկ պլանները: Մեթոդմիավորումները վերահսկում են այդ պլանների կատարումը, որակը, տնային հանձնարարությունների ծավալը, թեմատիկ գրավորների տրման ժամկետներն ու բովանդակությունը:
- Պատասխանատու ստորաբաժանումների և նրանց ղեկավարների կողմից կազմակերպվում և իրականացվում են ուսումնական գործընթացի բոլոր փուլերը:
- Ուսումնական բոլոր պարապմունքների /դաս, խմբակ, լաբորատոր և գործնական աշխատանքներ և այլն/ անցկացման ժամանակացույցը կազմվում է ըստ անհրաժեշտ նորմերի և գրաֆիկի, հաշվի են առնվում սովորողների և ուսուցիչների հանգստի ռեժիմի առանձնահատկությունները: Դասացուցակը կազմվում է բացառապես անհրաժեշտ պահանջներին համապատասխան:
- Դպրոցում ապահոված է կրթական գործընթացի բոլոր մասնակիցների փոխգործակցության և շփումների համար անհրաժեշտ միջավայր:
- Ուսումնադաստիարակչական բոլոր աշխատանքները կազմակերպվում են համաձայն նախապես ձևավորված պլանների. դրանց մշակմանը պարտադիր ներգրավվում են բոլոր շահառու խմբերը՝ այդ թվում ծնողները և սովորողները:
- Հաստատությունում ձևավորված է ուսուցիչների շարունակական մասնագիտական կատարելագործման, մանկավարժական դրական փորձի ընդհանրացման համար անհրաժեշտ միջավայր:
- Ուսումնական գործընթացում շարունակաբար ներդրվում են նոր և արդյունավետ մեխանիզմներ, էլեկտրոնային կրթական ռեսուրսներ, ժամանակակից մեթոդներ: Նոր ուսումնական տարվանից կիրականացվի նաև նախագծային ուսուցում:

Կրթության որակի չափման աշխատանքներ.

- Ուսումնադաստիարակչական գործընթացում ներառված բոլոր աշխատանքները շարունակաբար վերահսկվում և մշտադիտարկվում են:
- Պատասխանատու ոլորտների բոլոր անդամները հանդես են գալիս կիսամյակային և տարեկան կատարողական հաշվետվություններով: Ըստ ոլորտների առանձին մշակված ձևաչափերը հստակ արտացոլում են յուրաքանչյուր անդամի /դասղեկ, ուսուցիչ, մ/մ ղեկավար, լաբորանտ և այլն/ կողմից կատարված աշխատանքի բացթողումներն ու ձեռքբերումները, հնարավորություն են տալիս գնահատելու ցուցանիշները:

  Հատկանշական է, որ գնահատման այս մեխանիզմը հնարավորություն է տալիս ապահովելու աշխատակազմի արժևորման և խրախուսման գործընթացի հավաստիությունը և հուսալիությունը:
- Հաշվառվում և հրապարակվում են սովորողների ամենամսյա առաջադիմության ցուցանիշները, կազմակերպվում են առանձին և ընդհանուր քննարկումներ առկա խնդիրների լուծման նպատակով. ըստ սովորողների խմբերի՝ կազմվում է յուրաքանչյուր աշակերտի ուսումնառության արդյունքների տեղեկագիր:

- Շարունակաբար իրականացվում են կրթության որակի դիտարկման և վերլուծության մի շարք աշխատանքներ. մշտապես կատարվում է արտաքին և ներքին գնահատում, անցկացվում են հայտորոշիչ աշխատանքներ /գրավոր աշխատանքներ, ստուգարքներ, սեմինարներ և այլն/:
- Պարբերաբար կազմակերպվում են փոխադարձ դասալսումներ, բաց դասեր և առարկայական ստուգատեսներ:

**Ստորև ներկայացվում են առանձին օրինակներ՝ կրթության որակի չափման աշխատանքներից.**

✓ *Ներքին գնահատում.*

| Առարկայացանկը՝ ըստ ուսումնական պլանի | Աշակերտների գնահատականների միջին թվաբանականը՝ ըստ կրթական աստիճանների | | |
|---|---|---|---|
| | Տարրական դպրոց | Միջին դպրոց | Ավագ դպրոց |
| Մայրենի | 8 | 6 | - |
| Հայոց լեզու | - | 7 | 7 |
| Գրականություն | - | 7 | - |
| Հայ գրականություն | - | - | 7 |
| Ռուսաց լեզու | 8 | 6 | 7 |
| Օտար լեզու | 7 | 7 | 6 |
| Մաթեմատիկա | 7 | 5 | - |
| Երաժշտություն | 9 | 8 | - |
| Կերպարվեստ | 9 | 9 | - |
| Ես և շրջակա աշխարհը | 8 | - | - |
| Աշխարհագրություն | - | 6 | 6 |
| Հայաստանի աշխարհագրություն | - | 7 | - |
| Հայրենագիտություն | - | - | - |
| Հայոց պատմություն | - | 6 | 7 |
| Համաշխարհային պատմություն | - | 6 | 8 |
| Հայոց եկեղեցու պատմություն | - | 7 | 8 |
| Հասարակագիտություն | - | 7 | 7 |
| Հանրահաշիվ | - | 6 | 6 |
| Երկրաչափություն | - | 6 | 6 |
| Ինֆորմատիկա | - | 6 | 7 |
| Բնագիտություն | - | 5 | - |
| Ֆիզիկա | - | 7 | 6 |
| Քիմիա | - | 6 | 6 |
| Կենսաբանություն | - | 6 | 6 |
| Տեխնոլոգիա | 9 | 9 | - |
| ՆԶՊ և անվ. կենսագործ. | - | 7 | 7 |
| Ֆիզկուլտուրա | 9 | 8 | 9 |
| Շախմատ | 8 | - | - |
| **Ընդամենը /միջին ցուցանիշ/** | **8** | **7** | **7** |

✓ *Ընթացիկ առաջադիմության տեղեկագիր.*

ՀՀ Սյունիքի մարզ
«Շվանիձորի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ
2020 - 2021 ուստարի

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ
ՏԵՂԵԿԱԳԻՐ
II դասարան

| Հ/հ | Ազգանունը, անունը, հայրանունը | Ժամանակա-հատվածը | Առարկայացանկ | | | | | | | | | Բացակաները |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Մայրենի | Ռուսաց լեզու | Մաթեմատիկա | Ես և շրջ. աշխ. | Շախմատ | Տեխնոլոգիա | Երաժշտություն | Կերպարվեստ | Ֆիզկուլտուրա | |
| 1 | — | Հոկտեմբեր | 8 | 8 | 9 | 7 | 8 | 9 | 9 | 9 | 9 | 2 օր/ 10 ժամ |
| | | Նոյեմբեր | 9 | 8 | 8 | 8 | 9 | 9 | 9 | 9 | 9 | |
| | | **Առաջադիմությունը** | **+1** | **0** | **-1** | **+1** | **+1** | **0** | **0** | **0** | **0** | |
| 2 | | | | | | | | | | | | | |

✓ *Տարեկան առաջադիմության թերթիկ.*

ՀՀ Սյունիքի մարզ
«Շվանիձորի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ
2020 - 2021 ուստարի

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ
ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻԿ
II դասարան

| Հ/հ | Ազգանունը, անունը, հայրանունը | Ժամանակա-հատվածը | Առարկայացանկ | | | | | | | | | Բացակաները |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Մայրենի | Ռուսաց լեզու | Մաթեմատիկա | Ես և շրջ. աշխ. | Շախմատ | Տեխնոլոգիա | Երաժշտություն | Կերպարվեստ | Ֆիզկուլտուրա | |
| 1 | — | 1-ին կիսամյակ | 8 | 8 | 9 | 7 | 8 | 9 | 9 | 9 | 9 | 75 ժամ |
| | | 2-րդ կիսամյակ | 9 | 8 | 8 | 8 | 9 | 9 | 9 | 9 | 9 | |
| | | **Տարեկան** | **9** | **8** | **9** | **8** | **9** | **9** | **9** | **9** | **9** | |
| 2 | | | | | | | | | | | | | |

✓ *Քննությունների արդյունքների ցուցակ.*

**ՀՀ Սյունիքի մարզ**
**«Շվանիձորի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ**
**2021-2022 ուստարի**

## ՑՈՒՑԱԿ

**Գիտելիքների ստուգման, ավարտական, պետական ավարտական և կենտրոնացված ավարտական քննությունների արդյունքների**

| Հ/հ | Սովորողի ազգանունը, անունը | Գնահատականները՝ ըստ առարկաների | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | **4-րդ դասարան** | | | | | |
| | | Մայրենի | Մաթեմատիկա | | | | Միջին գնահատ. |
| **1.** | — | 9 | 9 | | | | **9** |
| **2.** | — | 9 | 10 | | | | **9.5** |
| | Միջին գնահատականը | **9** | **9.5** | | | | |

| Հ/հ | Սովորողի ազգանունը, անունը | 9-րդ դասարան | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Հ. լեզու | Գրականություն | Մաթեմա-տիկա | Օտար լեզու | | Բնագիտութ. | | Հայոց պատմություն | Ֆիզկուլ-տուրա | Միջին գնահատ. |
| | | | | | Ռ. Լ. | Անգ. | Աշխ. | Քիմ. | | | |
| **1.** | — | 9 | 7 | 12 | 6 | | 12 | | 5 | 7 | |
| **2.** | — | 11 | 5 | 11 | | 7 | 12 | | 5 | 5 | |
| | Միջին գնահատականը | **10** | **6** | **11.5** | **6.5** | | **12** | | **5** | **6** | |

| Հ/հ | Սովորողի ազգանունը, անունը | 12-րդ դասարան | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Հ. լեզու և հայ գրակ. | Մաթեմատիկա | Հայոց պատմություն | Ֆիզկուլ-տուրա | | | Միջին գնահատ. |
| **1.** | — | 11 | 13 | 13 | 9 | | | |
| **2.** | — | 11 | 14 | 14 | 7 | | | |
| | Միջին գնահատականը | **11** | **13.5** | **13.5** | **8** | | | |

**Ուսումնական հաստատության բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրը.**

Ուսումնական հաստատությունը համախմբում է կրթական գործընթացի բոլոր մասնակիցների (ուսուցիչներ, ծնողներ, աշակերտներ) ներուժը և ստեղծում նրանց միջև արդյունավետ համագործակցություն ինչպես դպրոցի և համայնքի, այնպես էլ ընդհանուր մակարդակներում: Դպրոցում ձևավորված է բազմակարծիք և մասնակցային այնպիսի միջավայր, որը ընդգրկում է ուսումնադաստիարակչական գործընթացի բոլոր օղակները: Մասնակցային մշակույթն իր մեջ պարունակում է այն բոլոր հմտությունները, որոնք անհարժեշտ են ընդունելու և հաղթահարելու արդի կրթական և հասարակական մարտահրավերները:

Դպրոցի արժեքային միջավայրի ձևավորումն անհնար է պատկերացնել առանց կրթական գործընթացի ուղղակի շահառու խմբերի և նրանց առանձին անդամների, ովքեր ակտիվորեն ներգրավված են հաստատության գործունեության բոլոր աշխատանքներում, մասնակցում են անցկացվող տարբեր քննարկումների և պատրաստ են կառուցողական փոխգործակցության: Միջավայրի յուրաքանչյուր անդամ ոչ միայն զինված է քննադատական մտածողության կոմպետենցիայով, այլև փնտրում և գտնում է լուծումներ ուսումնադաստիարակչական և կազմակերպչական առանձին հարցերում:

Արժեքային միջավայրի ձևավորմանը զուգահեռ անհատականությունը և սոցիալականությունը միահյուսվում են բազմակարծության գաղափարի մեջ. առանձին անդամները դառնում են միմյանց փոխլրացնող և շահադրդող ստեղծագործական խմբեր: Դրանով իսկ ձևավորվում է բազմակարծիք այն միջավայրը, որում ներդաշնակորեն երաշխավորված են և սոցիալականությունը և անհատականությունը:

Դպրոցում իրականացվում է համընդհանուր ներառական կրթություն, որը դրսևորվում է որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք: Այն նպատակաուղղված է յուրաքանչյուր սովորողի կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովմանը:

**Դպրոցում բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի ձևավորման նպատակով մշտապես իրականացվում են հետևյալ աշխատանքները.**



- *Դպրոցի անձնակազմի և շահառու այլ կողմերի գործուն ներգրավվածությամբ աշխատանքներ են տարվում սովորողների իրավունքների և շահերի պաշտպանության ուղղությամբ, առանձին քննարկումների ընթացքում ներկայացվում են սովորողների իրավունքներն ու պարտականությունները:*
- *Դպրոցում երաշխավորված են թե՛ աշակերտական, թե՛ ուսուցչամանկավարժական համակազմի ազատ կամարտահայտության իրավունքները, բացառված են այլակարծությունը սահմանափակող գործոնները:*
- *Դպրոցի ողջ անձնակազմի կողմից աշխատանքներ են տարվում դպրոցում բռնության ու հալածանքի (բուլինգ) ցանկացած ձևի կանխարգելման ուղղությամբ, սովորողների շրջանում բացատրական աշխատանքներ են տարվում ցանկացած հիմքով (արտաքին տեսքի, սոցիալական դրության, ծնողների կարգավիճակի, ազգային պատկանելիության) խտրական վերաբերմունքը բացառելու ուղղությամբ:*
- *Հաստատությունում ապահովվում է բարենպաստ բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորումը և բացառում է սովորողի անձի նկատմամբ ֆիզիկական և (կամ) հոգեբանական բռնությունը:*

- *Քայլեր են ձեռնարկվում սովորողների սոցիալական պաշտպանվածության ապահովման ուղղությամբ, ապահովված է բոլոր, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կրթություն ստանալու իրավունքը:*
- *Ուսուցչամանկավարժական անձնակազմի ուշադրության կենտրոնում է ԿԱՊԿՈՒ սովորողների հետ աշխատանքը, ուսումնական գործընթացում վերջիններիս լիքարժեք ներառումը:*
- *Ապահոված են անձնակազմի առօրյա բնականոն գործունեության համար անհրաժեշտ անվտանգային, առողջապահական, սանիտարահիգիենիկ, հակահամա-վարակային պայմանները:*
- *Դպրոցում առկա է սովորողների ինքնաարտահայտման և ինքնադրսևորման, սոցիալական անհատի ձևավորման պայմանները:*
- *Խրախուսվում է մասնակցային կառավարումը հաստատության խորհրդակցական մարմիններում.*
- *Դպրոցում ապահովված է պարտադիր կրթությունից դուրս մնացած սովորողների բացահայտման և ուղղորդման գործընթացը. բնակավայրում պարտադիր կրթությունից դուրս մնացած սովորողներ չկան:*
- *Մշտապես խրախուսվում է սովորողների յուրաքանչյուր հաջողություն և ձեռքբերում:*

<u>Ուսումնական հաստատության աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունները.</u>

Դպրոցի զարգացման ծրագրի արդյունավետ իրականացումն ապահովելու համար անհրաժեշտ է ողջ համակազմի փոխհամագործակցված և փոխներգործուն աշխատանքը: Կառավարման ժողովրդավար և արդյունավետ մեխանիզմների ապահովման հետ մեկտեղ անհրաժեշտ է կիրառել անձնակազմի արժևորման և խրախուսման մոտեցումներ:

Անհրաժեշտ է զարգացնել այն գիտակցումը, որ ցանկալի արդյունքների հնարավոր է հասնել բացառապես հաստատության բոլոր աշխատակիցների՝ ուսումնական և դաստիարակչական ոլորտների ղեկավարների, առանձին ստորաբաժանումների պատասխանատուների, ուսուցիչների, մանկավարժական աշխատողների, ինչպես նաև՝ ուսումնաօժանդակ (վարչատնտեսական) մասի աշխատողների համընդհանուր աշխատանքի շնորհիվ:

**Դպրոցում աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության համար ձևավորված են հետևյալ հնարավորությունները.**



- *Ստեղծված են պայմաններ մանկավարժական աշխատողների հմտությունների բարելավման համար:*
- *Ապահոված է սկսնակ ուսուցիչների մասնակցությունը մասնագիտական աջակցություն ստանալու գործընթացին:*
- *Խրախուսվում է ուսուցիչների մասնակցությունը հերթական և կամավոր ատեստավորումներին:*
- *Խթանվում են մանկավարժական աշխատողների ստեղծագործական նախաձեռնությունները.*

- ✓ Ապահովվում է մեթոդական աշխատանքի բարելավումը մեթոդական միավորումների արդյունավետ գործունեությունը:
- Դպրոցի հնարավորությունների սահմաններում իրականացվում է գործունեության արդյունավետությամբ աչքի ընկած, ինչպես նաև հաջողության հասած սովորողներ ունեցող ուսուցիչների խրախուսում:
- Դպրոցում ապահոված են անձնակազմի ինքնակրթության համար անհրաժեշտ ենթակառուցվածքները, խթանվում է մասնակցությունը տարբեր սեմինարների, վերապատրաստումների, այդ թվում՝ կամավոր ատեստավորմանը:
- Ապահոված է անհրաժեշտ միջավայր մանկավարժական համակազմի մեթոդական պատրաստվածությունն ու զարգացումը խթանելու համար:
- Խթանվում են նորամուծությունների յուրացման և կիրառման նկատմամբ մանկավարժների մասնագիտական կարողություններն ու հմտությունները, մասնագիտական կատարելագործմանն ուղղված ձգտումները:
- Ապահովվում է պատասխանատու ստորաբաժանումների ղեկավարների և ուսուցիչների մասնակցությունը կրթական կազմակերպությունների կողմից իրականացվող ընթացիկ տարաբնույթ վերապատրաստումներին և դասընթացներին:
- Ստեղծված են մասնագիտական աճի, նախաձեռնողականության և ինքնաիրացման հնարավորություններ ուսուցիչների համար:
- Ապահովվում է անձնակազմի ինքնակրթվելու, երեխաների կրթության և դաստիարակության գործում ազատ մտածելու կարողությունների զարգացումը, ստեղծագործական միտքը:
- Մշտապես արժանահավատորեն գնահատվում է յուրաքանչյուր ուսուցչի աշխատանքը՝ հարգանք ծնավորելով նրա ներգրավվածության և անձնական առաջադիմության նկատմամբ:
- Դպրոցում ներդրված են աշխատողների խրախուսման առանձին ձևեր, որոնք մշտապես կիրառվում են աշխատանքային պլաններով նախատեսված և ընթացիկ աշխատանքների արդյունքների վերլուծության փուլերում՝ յուրաքանչյուր ուսումնական տարում առնվազն երկու անգամ: Ընդ որում, ըստ ոլորտների կատարողական հաշվետվությունների առանձին մշակված ձևաչափերով հստակ արտացոլվում են յուրաքանչյուր անդամի կողմից կատարված աշխատանքի բացթողումներն ու ձեռքբերումները, որոնք հնարավորություն են տալիս գնահատելու ցուցանիշները. գնահատման այս մեխանիզմը հնարավորություն է տալիս ապահովելու աշխատակազմի արժևորման և խրախուսման գործընթացի հավաստիությունը և հուսալիությունը:
- Հաստատության երթևեկող աշխատակիցների այն անդամների նկատմամբ, ովքեր սահմանված կարգի համաձայն տրանսպորտային ծախսերի փոխհատուցումից չեն օգտվում /0.5 դրույքից պակաս ծանրաբեռնվածություն ունեցող և հաստատության տվյալ առարկայի գծով միակ մասնագետը չհանդիսացող ուսուցիչ, գրադարանավար, հաշվապահ և այլն/, դպրոցը կիրառում է փոխհատուցման այլ մեխանիզմ. նրանց ծախսերի փոխհատուցումն իրականացնում է Շվանիձորի միջնակարգ դպրոցի «Աշխատողների Արհեստակցական կազմակերպությունը»՝ իր Կանոնադրությանը և Միջոցների տնօրինման կարգին համապատասխան:

Ուսումնական հաստատության ֆինանսական գործունեությունը.

Ուսումնական հաստատության ֆինանսական գործունեության պլանավորման հիմնական նպատակը ուսումնական գործընթացի համար անհրաժեշտ միջավայրի ձևավորումն ու զարգացումն է՝ որոշակի ֆինանսական ռեսուրսների պայմաններում: Այս իմաստով Դպրոցի առջև դրված է ֆինանսավորման պլանավորման արդյունավետության բարձրացման խնդիրը՝ ծախսային ուղղությունները համապատասխանեցնելով դպրոցի և սովորողների կրթական կարիքներին:

Դպրոցի ֆինանսավորումն իրականացվում է հիմնադրի՝ Հայաստանի Հանրապետության կողմից՝ պետական բյուջեի միջոցներից: Ֆինանսավորման չափը ձևավորվում է ըստ իրականացվող հանրակրթական ծրագրերի՝ կախված սովորողների թվից. 2023 թվականի սեպտեմբերից այն կհաշվարկվի դասարանների թվով:

Դպրոցին հատկացված ֆինանսական միջոցները ծախսվում են՝ ելնելով Դպրոցի կարիքներից ու հնարավորություններից: Ֆինանսատնտեսական գործունեությունը հստակ է և թափանցիկ:

Դպրոցի ֆինանսական միջոցները 2018-2023 թվականների հաշվետու ժամանակահատվածում ծախսվել են նպատակային՝ կարիքի առաջացման դեպքում ելնելով ֆինանսական միջոցների հնարավորություններից: Տվյալ ուստարվա բյուջետային ֆինանսավորման հայտը և նախահաշվի նախագիծը, սահմանված կարգի և բյուջետային օրացույցին ներկայացվող պահանջների համաձայն, առաջարկություններ ստանալու նպատակով քննարկվում են կառավարման, մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհուրդների կողմից, ապա ներկայացվում լիազոր մարմնի հաստատմանը:
Հաստատության ֆինանսատնտեսական գործունեությունը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար հստակ արտահայտված է համապատասխան հաշվետվություններով, ֆինանսական և հաշվապահական փաստաթղթերով. յուրաքանչյուր ֆինանսական տարվա ֆինանսատնտեսական գործունեության նախահաշիվը, հաստիքացուցակը, եռամսյա հաշվետվությունները դրվում են դպրոցի պաշտոնական կայքում:

Դպրոցում 2018-2023 թթ. մշտապես իրականացվել են նաև ֆինանսական գործունեությանն առնչվող հետևյալ աշխատանքները.

- սահմանված կարգի համաձայն շարունակաբար անցկացվել է ակտիվների և պարտավորությունների ամենամյա գույքագրում:
- գնումների գործընթացները կազմակերպվել են անհրաժեշտ նորմերի և կարգերի պահանջների համապատասխան:

Հաստատության ընդհանուր ֆինանսական փաստաթղթերի և հաշվետվությունների հավաստիությունը հաստատվել է. դպրոցի ներքին և ֆինանսական գործունեությունը վերջին տարիներին երկու անգամ ենթարկվել է *Համակարգի գնահատման ներքին աուդիտի*՝ 2021 թ. (հաշվետու ժամանակահատվածը 2019, 2020 թվականներ) և 2023 թ. (հաշվետու ժամանակաշրջանը 2021, 2022 թվականներ) և հաշվետվությունների արդյունքները եղել են դրական:

# ԴՊՐՈՑԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ
## 2018-2023 թթ.




| | 2018 թ. | 2019 թ. | 2020 թ. | 2021 թ. | 2022 թ. | 2023 թ. |
|---|---|---|---|---|---|---|
| Ընդամենը | 30704,6 | 32960,9 | 34661,6 | 34980,3 | 36453,3 | 9725,0 |

*2023 թ-ի ցուցանիշները ներառում են առաջին եռամսյակի տվյալները

Դպրոցի բյուջեի ծախսման հիմնական ուղղությունն աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների կատեգորիան է, որին ուղղվում է տարեկան ֆինանսավորման շուրջ 89 %-ը, էլեկտրամատակարարման և ջեռուցման ծախսերին ուղղվում է շուրջ 4 %-ը:

# ԴՊՐՈՑԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ
## 2022 թ.



## Դպրոցի ֆինանսական խնայողություններով 2018-2023 թթ-ի ընթացքում իրականացվել են մի շարք աշխատանքներ.



- *Փոխվել են դպրոցի գլխավոր մուտքի և ճաշարանի դռները:*
- *Աշակերտական գույքով կահավորվել են ավագ դասարանների դասասենյակները:*
- *Վերանորոգվել է արտաքին ջրամատակարարման ցանցը:*
- *Մասնակի վերանորոգվել է էլեկտրական հոսանքի ներքին բաշխման ցանցը:*
- *Միջոցներ են ուղղվել հաստատության նյութատեխնիկական բազայի համալրմանը: ՏՀՏ նոր միջոցների ձեռքբերմանը*

Ուսումնական նպատակով կատարված ընդհանուր ծախսերը ուղղակիորեն նպաստել են ուսումնական գործընթացի կազմակերպման արդյունավետության բարձրացմանը:

Դպրոցը ֆինանսական միջոցներ է ուղղում նաև հերթական ատեստավորման համար անցկացվող վերապատրաստումներին ուսուցիչների մասնակցությանը: Յուրաքանչյուր տարի ատեստավորման համար վերապատրաստվում է ուսուցիչների 20%-ը. Դպրոցի և վերապատրաստող կազմակերպությունների միջև կնքված պայմանագրերի հիման վրա կատարվում է վճարում: Վերջին տարիներին ուսուցիչների վերապատրաստումներին ուղղվել է միջինում 75.000 ՀՀ դրամ:

Դպրոցի Ագարակ և Մեղրի քաղաքներից երթևեկող ուսուցիչները սահմանված կարգի համաձայն ստանում են ամենամսյա դրամական փոխհատուցում:

## ԵՐԹԵՎԵԿՈՂ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ




* *Տրանսպորտային փոխհատուցում չստացող երթևեկող աշխատակիցներին ծախսերի փոխհատուցում տրամադրվում է Շվանիձորի միջնակարգ դպրոցի «Աշխատողների արհեստակցական կազմակերպության» կողմից:*

Սկսած 2018 թ-ից՝ պահպանման ծախսերի նախահաշվով նախատեսված գումարների շրջանակում փաստացի կատարման արդյունքում առաջացած տնտեսումների հաշվին դպրոցի աշխատակիցները պարգևատրվել են դրամական խրախուսմամբ. պարգևատրումն իրականացվել է բոլոր աշխատակիցների նկատմամբ համաչափ մեխանիզմով՝ տվյալ տարվա համար հաշվարկվելով աշխատավարձի միևնույն տոկոսի չափով:

Իրավիճակի մասին պատկերն առավել ընդգծելու համար իրականացվել է իրավիճակի վերլուծություն: Ըստ որի կիրառվել է գործնականում արդյունավետ մեթոդներից մեկը՝ ուժեղ, թույլ կողմերի, հնարավորությունների (ՈւԹՀՎ) վերլուծությունը:

| ՈւԹՀՎ վերլուծություն | |
|---|---|
| **Ուժեղ կողմեր** | **Թույլ կողմեր** |
| **Շենքային պայմանները, նյութատեխնիկական բազան** | |
| ➢ *Դպրոցի հիմնանորոգված է:*<br>➢ *Դպրոցի բոլոր դասասենյակները և կաբինետները կահավորված են անհրաժեշտ գույքով. 5-12-րդ դասարանների, առանձին առարկայական դասասենյակների (ինֆորմատիկա, տեխնոլոգիա), մանկապատենական սենյակի և ճաշարանի գույքը բոլորովին նոր է:*<br>➢ *Դպրոցն ունի համացանցային կապի երկու գիծ, հագեցված է համակարգչային անհրաժեշտ սարքավորումներով:*<br>➢ *Դպրոցում առկա է հեռավար ուսուցման սարքավորումներով երկու դասասենյակ:*<br>➢ *Առկա են Բնագիտական և Արմաթ ինժեներական լաբորատորիաներ:*<br>➢ *Դպրոցն ունի ՆԶՊ կաբինետ՝ ուսումնական զենքով:*<br>➢ *Դպրոցի բակային տարածքում անցկացված է կաթիլային ոռոգման համակարգ:* | ➢ *Դպրոցը ունի կոսմետիկ վերանորոգման անհրաժեշտություն:*<br>➢ *Դպրոցի ներքին դռների մի մասը վնասված են:*<br>➢ *Դպրոցական շենքի էլեկտրական հոսանքի բաշխման ներքին ցանցը վթարային վիճակում է:*<br>➢ *Տարրական դասարանների դասասենյակները համալրված չեն նոր գույքով և պարագաներով:*<br>➢ *Բնագիտական լաբորատորիան չունի անհրաժեշտ կահավորում:*<br>➢ *Դպրոցն ունի էլեկտրոնային ուսումնական նյութերի համալրման կարիք:*<br>➢ *Դպրոցը չունի լոկալ ջեռուցում:* |
| **Կառավարման և խորհրդակցական մարմինները** | |
| ➢ *Դպրոցում գործում են Կանոնադրության համաձայն ձևավորված հետևյալ կառավարման և խորհրդակցական մարմինները.*<br>✓ *Կառավարման խորհուրդ,*<br>✓ *Մանկավարժական խորհուրդ,*<br>✓ *Ծնողական խորհուրդ,*<br>✓ *Աշակերտական խորհուրդ:*<br>➢ *Դպրոցում ձևավորված է երկու մեթոդական մասնախումբ:*<br>➢ *Կառավարման և խորհրդակցական մարմինները ձևավորվում են ըստ կանոնադրության և օրենքով սահմանված կարգերի:*<br>➢ *Կոլեգիալ կառավարման մարմինը կազմված է 14 անդամից, այն ձևավորվել է որպես Միացյալ խորհուրդ (Շվանիձորի և Նռնաձորի միջնակարգ դպրոցների):*<br>➢ *Խորհուրդն իրականացնում է տնօրենի գործունեության, դպրոցի զարգացման ծրագրի կատարման վերահսկողություն և կանոնադրությամբ սահմանված այլ գործառույթներ:* | ➢ *Դպրոցի խորհրդակցական մարմիններում առկա է գործառույթների իրականացման և համագործակցության խթանման արդյունավետ մեխանիզմների զարգացման անհրաժեշտութուն:*<br>➢ *Ծնողական խորհուրդը թերանում է մանկավարժական աշխատողների և ծնողների կողմից երեխաների դաստիարակության նկատմամբ միասնական պահանջների ձևավորման և սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքի բարելավմանն ուղղված միջոցառումների կատարման աշխատանքներում:*<br>➢ *Պասիվ է խորհրդակցական մարմինների ներգրավվածությունը ուսումնադաստիարակչական գործընթացի առանձին օղակներում:* |

<table>
<tr><td>

- Դպրոցի Ծնողական խորհուրդը կազմված է 8 անդամից, այն պարբերաբար լսում է տնօրենի հաղորդումը դպրոցի գործունեության վիճակի և հեռանկարային ծրագրերի մասին, ստանում ծնողներին հետաքրքրող հարցերի պարզաբանումները:
- Ծնողական խորհուրդը նպաստում է կրթական գործունեության արդյունավետ կազմակերպմանը և հիմնականում իրականացնում է սահմանված գործառույթները:
- Աշակերտական խորհուրդը ձևավորվում ու գործում է ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին համապատասխան: Այն խթանում է սովորողների իրավագիտակցությունը, նպաստում ազատ կամարտահայտման զարգացմանը:
- Դպրոցում առկա մեթոդական մասնախմբերը նպաստում են ուսումնական գործընթացի առավել արդյունավետ իրականացմանը և գործում են համագործակցային և փոխլրացնող մեխանիզմներով:
- Դպրոցի մանկավարժական խորհուրդը ձևավորվում և գործում է կանոնադրության և սահմանված կարգի համաձայն:

</td><td>

- Դպրոցում կրթադաստիարակչական գործունեության արդյունավետ կազմակերպման, ինչպես նաև արտաքին և արտադպրոցական արդյունավետ համագործակցության ապահովման համար անհրաժեշտ է ձևավորել Շրջանավարտների խորհուրդ: Դա կամրապնդի դպրոցի և շրջանավարտների միջև շարունակական կապը, կնպաստի դպրոցում լրացուցիչ կրթական ծրագրերի, արտադպրոցական նախագծերի իրականացմանը:
- Շրջանավարտների խորհրդի գործունեությունը խթան կհանդիսանա աշակերտների և ուսանողների համագործակցության համար, ինչն էլ կնպաստի սովորողների մասնագիտական կողմնորոշման զարգացմանը:

</td></tr>
<tr><td colspan="2">Համագործակցությունը</td></tr>
<tr><td>

- Դպրոցը համագործակցում է մարզպետարանի, ԿԳՄՍ-ի, ԳԹԿ-ի, ԿՏԱԿ-ի, ԿԶՆԱԿ-ի, համայնքապետարանի, ինչպես նաև համայնքում տեղակայված մի խումբ պետական կառույցների հետ, այդ թվում՝ ոստիկանություն, ՊՆ և ԱԻՆ ստորաբաժանումներ, կրթամշակութային, առողջապահական և բնապահպանական կազմակերպություններ և այլն:
- Դպրոցն ակտիվ համագործակցում է նաև մի շարք հասարակական կազմակերպությունների հետ, որոնցից հատկանշական է «Թաքնված ճանապարհի նախաձեռնություն» ՀԿ-ի հետ ունեցած երկարամյա համագործակցությունը:
- Դպրոցը 2021 թ-ից ներգրավված է «Դասավանդի՛ր, Հայաստան» կազմակերպության կրթական ծրագրերում:
- Դպրոցը մշտապես մասնակցում է համայնքի կրթամշակութային և ռազմամարզական ծրագրերին և միջոցառումներին:
- Դպրոցը շարունակաբար համագործակցում է Հ. Իգիթյանի անվան Գեղագիտության ազգային կենտրոնի Մեղրու մասնաճյուղի հետ:

</td><td>

- Անհրաժեշտ է արդյունավետ համագործակցության զարգացում համայնքում տեղակայված ՊՆ և ԱԻՆ ստորաբաժանումների հետ: Համագործակցային աշխատանքները պետք է ներառեն գործնական և դաշտային պարապմունքների ու վարժանքների անցկացման շարունակական միջոցառումներ:

</td></tr>
</table>

| Կրթության որակը | |
|---|---|
| ➢ Դպրոցում ապահովված է արտադասարանական խմբակների, լրացուցիչ կրթական ծառայությունների, ուսումնական լաբորատորիաների, մասնագիտական կողմնորոշման կենտրոնների արդյունավետ գործունեությունը:<br>➢ Դպրոցը ըստ անհրաժեշտության կազմակերպում և իրականացնում է ուսուցման այլընտրանքային ձևեր, այդ թվում՝ տնային ուսուցում և հեռավար ուսուցում:<br>➢ Դպրոցը իրականացնում է ԿԱՊԿՈՒ սովորողներին մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրումը, ինչպես ուսումնական հաստատության, այնպես էլ տարածքային մակարդակներում:<br>➢ Որակյալ կրթության ապահովմանը զուգահեռ մշտապես մեծ ուշադրություն է դարձվում սովորողների գեղագիտական, պետականամետ և ռազմահայրենասիրական դաստիարակությանը, նրանց ստեղծագործական կարողությունների զարգացմանը:<br>➢ Մշտապես ուշադրության կենտրոնում են սովորողների առողջության պահպանումն և անվտանգության ապահովումը:<br>➢ Շարունակաբար կազմակերպվում են ներդպրոցական, արտադպրոցական, ներհամայնքային նպատակային միջոցառումներ, երկարօրյա էքսկուրսիաներ, այցելություններ մշակութային ժամանցի կենտրոններ:<br>➢ Մշտապես անց են կացվում մարզամշակութային բազմաբնույթ միջոցառումներ. սովորողները ակտիվորեն մասնակցում են մանկապատանեկան և երիտասարդական մրցույթների, փառատոնների և ցուցահանդեսների:<br>➢ Վերջին տարիներին դպրոցի տարրական դասարանների մարզական թիմը Համայնքային սպորտլանդիաներում գրավել է մրցանակային տեղեր:<br>➢ Շարունակաբար ներդրվում և կիրառվում են սովորողների ուսման առաջադիմության խթանման մեխանիզմներ. առաջադիմության աճ արձանագրած սովորողները ուսումնական տարվա ընթացքում առնվազն 2 անգամ դպրոցի կողմից արժանանում են պարգևների և շնորհակալագրերի: | ➢ Ցածր է սովորողների կողմից որակյալ կրթություն ստանալու ձգտումը:<br>➢ Սովորողների առաջադիմության ընդհանուր ցուցանիշը էական աճ չի նկատվում:<br>➢ Պասսիվ են աշակերտների հետաքրքրությունները օլիմպիադաների նկատմամբ:<br>➢ Միջազգային օլիմպիադաներին մասնակցության բացակայություն:<br>➢ Հանրապետական օլիմպիադաների մասնակցության ոչ բավարար արդյունքներ: |

<table>
<tr><th colspan="2">Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացումն ապահովող միջոցառումները</th></tr>
<tr><td>
➢ Դպրոցի տնօրենությունն ունի դպրոցի ղեկավարման և կառավարման անհրաժեշտ պատրաստվածություն, ընդհանուր կերպով տիրապետում է դպրոցի ուսումնադաստիարակչական, կառավարման ոլորտների ղեկավարման առանձնահատկություններին:<br>
➢ Դպրոցը ուսումնադաստիարակչական գործընթացում ապահովում է աշակերտակենտրոն մոտեցում՝ համադրելով ուսուցման արդի մեթոդների կիրառմամբ:<br>
➢ Ուսուցիչներն ունեն անհրաժեշտ պատրաստվածություն, մասնագիտական զարգացվածություն, անհրաժեշտ կարողություններ և հմտություններ:<br>
➢ Մեծ է պատասխանատու ստորաբաժանումների ղեկավարների և ուսուցիչների մասնակցությունը կրթական կազմակերպությունների կողմից իրականացվող ընթացիկ տարաբնույթ վերապատրաստումներին, սեմինարներին և դասընթացներին:
</td><td>
➢ Ցածր է ուսուցիչների կամավոր ատեստավորման և տարակարգ ստանալու ձգտումը:<br>
➢ Նորամուծությունների նկատմամբ առկա է առանձին մանկավարժների հետաքրքրության բացակայություն:<br>
➢ Ոչ բոլոր ուսուցիչներն են տիրապետում դասավանդման արդյունավետ և ժամանակակից, այդ թվում՝ տեղեկատվական, հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման հմտություններին:
</td></tr>
<tr><th colspan="2">Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրը</th></tr>
<tr><td>
➢ Դպրոցում երաշխավորված են թե՛ աշակերտական, թե՛ ուսուցչամանկավարժական համակազմի ազատ կամարտահայտության իրավունքները, բացառված են այլակարծությունը սահմանափակող գործոնները:<br>
➢ Հաստատությունում ապահովվում է բարենպաստ բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորումը և բացառվում է սովորողի անձի նկատմամբ ֆիզիկական և (կամ) հոգեբանական բռնությունը:<br>
➢ Մշտապես ապահովված է սովորողների սոցիալական պաշտպանվածությունը, ապահովված է բոլոր, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կրթություն ստանալու իրավունքը:<br>
➢ Ուսուցչամանկավարժական անձնակազմի ուշադրության կենտրոնում է ԿԱՊԿՈՒ սովորողների հետ աշխատանքը, ուսումնական գործընթացում վերջիններիս լիքարժեք ներգրավումը:<br>
➢ Առկա է սովորողների ինքնաարտահայտման և ինքնադրսևորման, սոցիալական անհատի ձևավորման պայմանները:<br>
➢ Մշտապես խրախուսվում է սովորողների յուրաքանչյուր հաջողություն և ձեռքբերում:
</td><td>
➢ Սովորողների կողմից իրենց իրավունքների ու պարտականությունների իմացության ոչ բավարար մակարդակ:<br>
➢ Դպրոցում կազմակերպվող միջոցառումներին ցածր նախաձեռնողականություն:
</td></tr>
</table>

| Ուսումնական միջավայրը | |
|---|---|
| ➢ Դասասենյակները և առարկայական կաբինետները հիմնականում վերանորոգված են և կահավորված անհրաժեշտ գույքով:<br>➢ Դպրոցի ուսումնական միջավայրը հարմարավետ է, ընդարձակ ու լուսավոր, վերանորոգված և պատշաճ կահավորված:<br>➢ Դպրոցի գրեթե ողջ տարածքն ապահովված է ինտերնետային կապով:<br>➢ Դպրոցի միջանցքների պատերը կահավորված են նկարներով, ուսումնական պաստառներով, պարբերաբար կազմակերպվում են ցուցահանդեսներ, իրականացվում են թեմատիկ ձևավորումներ:<br>➢ Ապահովված են սովորողների առողջության ու անվտանգության պահպանման նորմերը, մշտապես հսկվում է տարածքի սանիտարահիգիենիկ վիճակը:<br>➢ Դպրոցի բակային տարածքը բարեկարգ է, կանաչապատված, տեղադրված են բակային նստարաններ, ուսումնական տաղավարներ, ցայտաղբյուրներ: | ➢ Տարրական դասարանների դասասենյակները համալրված չեն նոր գույքով և պարագաներով:<br>➢ Բնագիտական լաբորատորիան չունի անհրաժեշտ կահավորում:<br>➢ Դպրոցն ունի էլեկտրոնային ուսումնական նյութերի համալրման կարիք:<br>➢ Դպրոցի շենքը չունի տեղաշարժման սահմանափակումներ ունեցող անձանց համար նախատեսված հարմարություններ: |
| **Աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունները** | |
| ➢ Խթանվում են մանկավարժական աշխատողների ստեղծագործական նախաձեռնությունները:<br>➢ Ապահովվում է մեթոդական աշխատանքի բարելավումը, մեթոդական միավորումների արդյունավետ գործունեությունը:<br>➢ Դպրոցի հնարավորությունների սահմաններում իրականացվում է գործունեության արդյունավետությամբ աչքի ընկած, ինչպես նաև հաջողության հասած սովորողներ ունեցող ուսուցիչների խրախուսում:<br>➢ Դպրոցում ապահովված են անձնակազմի ինքնակրթության համար անհրաժեշտ ենթակառուցվածքները, խթանվում է մասնակցությունը տարբեր սեմինարների, վերապատրաստումների, այդ թվում՝ կամավոր ատեստավորմանը:<br>➢ Ապահովված է անհրաժեշտ միջավայր մանկավարժական համակազմի մեթոդական պատրաստվածությունն ու զարգացումը խթանելու համար:<br>➢ Խրախուսվում է ուսուցիչների մասնակցությունը հերթական և կամավոր ատեստավորումներին:<br>➢ Խթանվում են նորամուծությունների յուրացման և կիրառման նկատմամբ մանկավարժների մասնագիտական կարողություններն ու հմտությունները, մասնագիտական կատարելագործման | ➢ Ուսուցչամանկավարժական անձնակազմի ոչ բոլոր անդամների մոտ է առկա ինքնակատարելագործման և ինքնակրթության մոտիվացիայի բավարար մակարդակ:<br>➢ Կամավոր ատեստավորմանը մասնակցելու հետաքրքրվածության ոչ բավարար մակարդակ: |

| | |
|---|---|
| ուղղված ձգտումները:<br>➢ Ստեղծված են մասնագիտական աճի, նախաձեռնողականության և ինքնաիրացման հնարավորություններ:<br>➢ Ապահովվում է անձնակազմի ինքնակրթվելու, երեխաների կրթության և դաստիարակության գործում ազատ մտածելու կարողությունների զարգացումը, ստեղծագործական միտքը:<br>➢ Մանկավարժների, սովորողների և ծնողների ուղղակի շփումների, համագործակցային և թիմային աշխատանքի խթանման նպատակով ձևավորվել են առցանց գործիքակազմ՝ առանձին և ընդհանուր էջ-խմբերի տեսքով:<br>➢ Մշտապես արժանահավատորեն գնահատվում է յուրաքանչյուր ուսուցչի աշխատանքը, խթանվում նրա ներգրավվածությունը և անձնական առաջադիմության ձգտումը:<br>➢ Դպրոցում ներդրված են աշխատողների խրախուսման առանձին ձևեր, որոնք մշտապես կիրառվում են աշխատանքային պլաններով նախատեսված և ընթացիկ աշխատանքների արդյունքների վերլուծության փուլերում՝ յուրաքանչյուր ուսումնական տարում առնվազն երկու անգամ: | |
| **Ուսումնական հաստատության ուսումնական նպատակով կատարված ծախսերը.** | |
| ➢ Ֆինանսական հնարավորությունների սահմաններում մշտապես միջոցներ են ուղղվում նյութատեխնիկական բազայի համալրմանը, ՏՀՏ միջոցների ձեռքբերմանը:<br>➢ Ուսումնական նպատակով կատարված ընդհանուր ծախսերը ուղղակիորեն նպաստում են ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացմանը:<br>➢ Դպրոցը ֆինանսական միջոցներ է ուղղում նաև հերթական ատեստավորման համար անցկացվող վերապատրաստումներին ուսուցիչների մասնակցությանը:<br>➢ Սկսած 2018 թ-ից՝ յուրաքանչյուր տարի խնայողությունների հաշվին դպրոցի բոլոր աշխատակիցները պարգևատրվում են դրամական խրախուսմամբ:<br>➢ Դպրոցը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով 2021 թ-ին ստեղծել է առանձին Արհեստակցական կազմակերպություն (ԱԿ), որի միջոցները ԱԿ կանոնադրության համաձայն ուղղվում են ԱԿ գործունեությանը: | ➢ Դպրոցի ծախսերի մեծ մասն ուղղվում է աշխատավարձի ու դրան հավասարեցված վճարներին, ինչպես նաև դպրոցի պահպանման ծախսերին (էլեկտրաէներգիայի դիմաց վճարներ, ընթացիկ վերանորոգում):<br>➢ Սահմանափակ են դպրոցի նյութատեխնիկական բազայի հագեցվածությանը միջոցներ հատկացնելու հնարավորությունները: |

## 2.3. Հիմնախնդիրները.

Իրավիճակի վերլուծությունը համակարգված իրականացնելու համար նպատակահարմար է այն կատարել ըստ որոշակի ոլորտների, քանի որ այդ կերպ առավելագույնս ընդգծվում են դպրոցի ուժեղ և թույլ կողմերը: Պետք է հաշվի առնել նաև, որ մի դեպքում դպրոցն ունենում է հաջողություններ որևէ ուղղությամբ և դժվարություններ մեկ այլ ուղղությամբ, իսկ մյուս դեպքում միևնույն ուղղությամբ դպրոցն ունենում է և՛ հաջողություններ, և՛ դժվարություններ:

Առկա հիմնախնդիրների վերհանման նպատակով իրականացվել է վերլուծություն՝ ըստ հետևյալ ոլորտների.

1. *Կառավարման և խորհրդակցական մարմինները,*
2. *Մանկավարժական համակազմը,*
3. *Ուսումնական միջավայրը,*
4. *Կրթության որակը,*
5. *Տեխնոլոգիաները և նորարարությունները:*

Վերլուծությունը հիմնված է կոնկրետ տվյալների վրա, այն ծանրաբեռնված չէ ոչ էական հարցերով և մոտեցումներով: Ստորև առանձնակի անդրադարձ է կատարվել այն ոլորտներին, որոնցում առկա են էական հիմնախնդիրներ, և որոնց լուծումներն առաջիկայում իրատեսական են:

***1/ Կառավարման և խորհրդակցական մարմիններր.***

Կազմակերպության օրինակելի կանոնադրության 75-րդ կետով ամրագրված է.

«Հանրակրթական դպրոցում կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման, ինչպես նաև զարգացման ծրագրերին աջակցելու և համայնքի հետ արդյունավետ համագործակցություն ապահովելու նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ *մանկավարժական խորհուրդ, առարկայական մեթոդական միավորումներ, ծնողական, աշակերտական, շրջանավարտների, հոգաբարձուների խորհուրդներ*: Հանրակրթական դպրոցում կարող են ձևավորվել խորհրդակցական կամ խորհրդատվական այլ մարմիններ»:

Բոլոր խորհրդակցական մարմինները պետք է ունենան իրենց կանոնադրությունը, որը կազմում է դպրոցը՝ հիմք ընդունելով օրինակելի կանոնադրությունը: Կանոնադրությամբ սահմանվում են տվյալ մարմնի գործունեության ոլորտները և կարգը: Շատ կարևոր է, որ խորհուրդներն ունենան իրական ինքնավարություն, ազատ լինեն իրենց գործողություններում՝ պահպանելով իրենց իրավունքներն ու պարտականությունները: Այն դեպքում, երբ խորհրդակցական մարմինները գործում են ֆորմալ, չեն կատարում կամ մասամբ են կատարում իրենց գործառույթները, դպրոցում ուսումնադաստիարակչական և կառավարման գործընթացներն էականորեն տուժում են: Հաստատությունը դառնում է փակ, այստեղ իրականացվող գործընթացները ուղղակի շահառուների համար դառնում են ոչ ընկալելի, և արդյունքում խորհրդակցական մարմինների և դպրոցի միջև առաջանում է ոչ կառուցողական միջավայր:

Նշված հիմնախնդիրների լուծումներն իրենց արտացոլումն են գտել դպրոցի Զարգացման ծրագրում. դրանք ենթադրում են հետևյալ քայլերը.

- *Միջոցներ ձեռնարկել բարձրացնելու խորհրդակցական մարմինների աշխատանքի արդյունավետությունը:*
- *Առանձին խորհրդակցական մարմինների անդամների համար պարբերաբար կազմակերպել խորհրդատվություններ և սեմինարներ: Խթանել նրանց անդամների*

*մասնակցությունը կրթական կազմակերպությունների կողմից իրականացվող համապատասխան վերապատրաստումների և դասընթացների:*

- ❖ *Խթանել խորհրդակցական մարմինների ներգրավվումը ուսումնադաստիարակչական գործընթացի բոլոր օղակներում: Աջակցել նրանց իրականացնելու փոխհամաձայնեցված և փոխլրացնող գործունեություն՝ ձևավորելով դրա համար անհրաժեշտ աշխատանքային մթնոլորտ և միջավայր:*

***<u>2/ Մանկավարժական համակազմը.</u>***

Ուսումնական գործընթացի փոխներգործուն կողմերն են սովորեցնողը և սովորողը. ուսուցիչը և աշակերտը մեկ ամբողջական համակարգ են, և նրանց գործունեությունը փոխկապակցված է:

Նրանց առանձին դիտարկելիս վերլուծության պատկերը կլինի ոչ ամբողջական:




Դպրոցի տնօրենությունը պետք է կարողանա գնահատել մանկավարժական պոտենցիալը, ինչի համար պետք է կիրառել գնահատման չափանիշներ: Կարելի է ուսուցչին գնահատել ըստ նրա կրթության և փորձառության, ըստ ուսուցման գործընթացում ունեցած հաջողությունների, ըստ դպրոցի զարգացման գործընթացում նրա ունեցած ներդրման և այլն:

Կարող են կիրառվել նաև հետևյալ չափանիշները.

- ✓ բարձրագույն մասնագիտական կրթությունը,
- ✓ աշխատանքային ստաժը և փորձը,
- ✓ ուսուցման գործընթացում դասավանդման այնպիսի մեթոդների և հնարների կիրառումը, որոնք աշակերտներին հնարավորություն են տալիս ստանալու բավարար գիտելիքներ, ձեռք բերելու անհրաժեշտ կարողություններ և հմտություններ,
- ✓ գնահատման մեթոդաբանության կարողությունները և կիրառման հմտությունները,
- ✓ առարկայական չափորոշիչների իմացությունը, դրանց համապատասխան գործելակերպը,
- ✓ դասի պլանավորումը, նպատակների և խնդիրների սահմանումն ու վերհանումը,
- ✓ մասնակցությունը հաստատության կառավարմանը,
- ✓ սովորողների հետ ձևավորված հարաբերությունների որակը, աշակերտակենտրոն ուսուցման ապահովման, սովորողների մեջ ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացման հմտությունները,
- ✓ գործընկերների հետ ցուցաբերվող համագործակցությունը փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով,
- ✓ սովորողի (այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող)՝ կրթության որակի ապահովմանն ուղղված այլընտրանքային ծրագրային, մեթոդամանկավարժական աշխատանքների կատարման հմտությունները,

- ✓ սովորողների ուսուցման արդյունավետ մեթոդների ու տեխնոլոգիաների ընտրության, ուսուցման կազմակերպման խմբային և անհատականացված մոտեցումների պլանավորման, ուսումնական նյութերի մշակման աշխատանքներում ունեցած կարողություններն ու ձեռքբերումները:

Այս չափանիշների հիման վրա կատարված ուսումնասիրությունների արդյունքում վեր են հանվում որոշ հիմնախնդիրներ.

- ✓ *Ուսուցիչների մի փոքր խումբ համարում է, որ ուսուցումը հնարավոր է կազմակերպել միայն դասավանդվող առարկայի ուսումնական նյութը լավ մատուցելով: Նրանք դժվարությամբ են կիրառում ուսուցման ակտիվ և ժամանակակից մեթոդներ:*
- ✓ *Նորամուծությունների նկատմամբ առկա է առանձին մանկավարժների հետաքրքրության բացակայություն:*
- ✓ *Ուսուցիչների մի փոքր խումբ լիովին չի տիրապետում գնահատման մեթոդաբանությանը և գնահատման ձևերի արդյունավետ կիրառմանը, ինչն էլ հանգեցնում է սուբյեկտիվ մոտեցման և երբեմն խախտվում է գնահատման հավաստիությունն ու հուսալիությունը:*
- ✓ *Ցածր է ուսուցիչների կամավոր ատեստավորման և տարակարգ ստանալու ձգտումը:*
- ✓ *Ոչ բոլոր ուսուցիչներն են տիրապետում դասավանդման արդյունավետ և ժամանակակից, այդ թվում՝ տեղեկատվական, հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման հմտություններին:*

Այս հիմնախնդիրներն իրենց արտացոլումն են գտնել դպրոցի զարգացման ծրագրում.

- ❖ *հստակ մեխանիզմների կիրառմամբ նպաստել մանկավարժական համակազմի մեթոդական պատրաստվածությանն ու զարգացմանը:*
- ❖ *Զարգացնել նորամուծությունների յուրացման և կիրառման նկատմամբ մանկավարժների մասնագիտական կարողություններն ու հմտությունները:*
- ❖ *Խթանել մասնագիտական կատարելագործմանն ուղղված ձգտումները:*

<u>3/ *Ուսումնական միջավայրը.*</u>

Զարգացման ծրագրի պլանավորման համար կարևոր գործոն է ուսումնական միջավայրի համակողմանի վերլուծությունը:

*Ուսումնական միջավայրը* դասասենյակների և առարկայական կաբինետների, դասագրքերի և այլ գրականության, սարքավորումների և մուլտիմեդիայի, դպրոցում ձևավորված սովորեցնելու և սովորելու ավանդույթի, դպրոցի ներսում և դպրոցից դուրս առկա հասարակական հարաբերությունների ամբողջությունն է:

Այն պայմանավորված է նշված բոլոր ուղղությունների փոխկապակցվածությամբ: Դպրոցը կարող է հաջողություններ ունենալ մի ուղղությամբ, որոնք սակայն պակաս արդյունավետ կլինեն մյուս ուղղություններում առկա բացթողումների պատճառով:

Դպրոցում ուսումնական արդյունավետ միջավայրի համար պետք է՝

- ✓ դասասենյակները և առարկայական կաբինետները լինեն վերանորոգված և կահավորված անհրաժեշտ գույքով,
- ✓ դպրոցը ապահովված լինի դասագրքերով և այլ ուսումնական գրականությամբ, արդի տեղեկատվական տեխնոլոգիաներով, սարքավորումներով և մուլտիմեդիայով,

- ✓ դպրոցում ձևավորված լինեն հասարակական այնպիսի հարաբերություններ, որոնք համապատասխանում են երեխաների իրավունքներին և ժողովրդավարական դպրոցի մոտեցումներին,
- ✓ դպրոցում ձևավորված լինի սովորեցնելու և սովորելու ավանդույթ (մշակույթ),
- ✓ ուսուցման գործընթացում խթանվեն նորարարությունն ու ստեղծագործական աշխատանքը,
- ✓ դպրոցում պետք է ապահովված լինի մանկավարժական ինքնավարության, ակադեմիական ազատության, դրական և ապահով մթնոլորտ բոլոր շահակիցների համար,
- ✓ ուսումնական գործընթացը պետք է իրականացվի բացառապես հաստատության կառավարման և խորհրդակցական մարմինների, մանկավարժների, սովորողների և ծնողների փոխադարձ վստահության պայմաններում,
- ✓ դպրոցում որոշումները պետք է կայացվեն համագործակցության արդյունքում, առանձին իրավիճակների կամ խնդիրների քննարկման ժամանակ անհրաժեշտ է ապահովել բոլոր կողմերի մասնակցությունն ու նրանց դիրքորոշումների ներկայացումը,
- ✓ հաստատության կառավարման գործընթացներում շահակիցների բոլոր խմբերին պարբերաբար պետք է հատկացնել ժամանակ՝ անհրաժեշտ դիտարկումներ և առաջարկներ ներկայացնելու համար:

Ծնողների և սովորողների սոցիալական պահանջմունքը պետք է արտացոլվի դպրոցի ուսումնադաստիարակչական պլանում և դրսևորվի ուսումնական գործընթացի բոլոր փուլերում: Այս պահանջը պետք է դրվի նաև *ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի* բաշխման հիմքում:

Դպրոցի <u>*ուսումնական պլանը*</u> դպրոցի հիմնարար փաստաթղթերից է, որն ապահովում է դպրոցի կողմից պետական և հանրային պատվերի կատարումը: Դպրոցի ուսումնական պլանը պետք է կազմվի օրինակելի ուսումնական պլանների հիմքով և առանձնակի ուշադրություն պետք է տրվի դպրոցական բաղադրիչի հատկացմանը: Վերջինիս ոչ օբյեկտիվ բաշխման արդյունքում ընկնում է ուսումնական պլանի կատարման արդյունավետությունը, ինչն էլ բացասաբար է ազդում ուսումնական գործընթացի արդյունքների վրա:

Այս հիմնախնդիրներն իրենց արտացոլումն են գտել դպրոցի զարգացման ծրագրում՝ հիմք դառնալով որոշակի նպատակների:

- ❖ *Ապահովել դպրոցում ուսումնական անհրաժեշտ միջավայր, նպաստել դրա շարունակական զարգացմանը:*
- ❖ *Ապահովել ուսումնական պլանի համապատասխանությունը դպրոցում սովորողների կարիքներին:*

<u>**4/ Կրթության որակը.**</u>

Կրթության որակը բավականին բարդ ու ընդգրկուն հասկացություն է, որի կարևորությունը սահմանվում է առաջին հերթին կրթական փաստաթղթերով և չափորոշիչներով: Կրթության որակը հիմնականում պարունակում է կրթության չափելի արդյունքները. այն սերտորեն առնչվում է կրթության մատչելիությանը և փոխլրացնում է նրան: Եթե կրթության որակը հնարավոր չէ առանց կրթության մատչելիության, ապա մատչելիությունը իմաստազրկվում է առանց համապատասխան կրթական որակի ապահովման:

Որակյալ կրթությունը միտված է ապագային և ենթադրում է ոչ միայն գիտելիքների ուսուցանում և յուրացում, այլև նոր՝ գիտելիքաստեղծ գործունեություն: Այն որակյալ կրթության հիմքերից է, որը կարող է բերել գիտելիքահեն տնտեսության ձևավորմանը և ժողովրդավարական հասարակարգի զարգացմանը:

Կրթության որակը ներառում է բազմաթիվ բաղադրիչներ: Դրանցից առաջնահերթն ուսումնառության արդյունքներն են, որոնք պահանջված են սովորողների կողմից, և ապահովում են շրջանավարտների պատրաստվածությունը՝ ուսումը շարունակելու կրթության հաջորդ մակարդակում կամ անցնելու համապատասխան աշխատանքային գործունեության:

Կարևոր է հասկանալ, թե ինչպես կարելի է գնահատել կրթության որակը: Դրա համար օգտակար կարող են լինել հետևյալ չափանիշները:

- Ուսումնական գործընթացի փաստացի վիճակը:

Դպրոցը սահմանել է ուսումնական գործընթացի նպատակներ և խնդիրներ, կիրառում է համապատասխան տեխնոլոգիաներ, ուսուցումը համապատասխանեցնում է աշակերտների կարիքներին: Դպրոցը ապահովված է անհրաժեշտ ուսումնական և ուսումնամեթոդական նյութերով, պահանջվող սարքավորումներով և գույքով:

- Կրթական գործընթացի կատարողականը:

Կրթական գործընթացում հանձնարարությունները, կազմակերպչական գործողությունները կատարվում են ժամանակին և անսխալ, մշակված է մանկավարժների աշխատանքի կազմակերպման հստակ մեխանիզմ, կատարվող աշխատանքները ֆորմալ չեն, մշտապես վերլուծվում են ուսումնական և աշխատանքային պլաններից շեղվելու պատճառները, մշակվում են դրանց ուղղման գործողություններ, վեր են հանվում բացթողումները և շտկվում դրանց հետևանքները:

- Կրթական գործընթացի արդյունավետություն:

Կրթական գործընթացը բնութագրվում է ուսումնական աշխատանքի կազմակերպման արդյունավետությամբ, աշակերտների պատրաստվածության մակարդակը համապատասխանում է չափորոշչային պահանջներին և կարիքներին:

Դպրոցում անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել աշակերտների հաջողություններին, խթանել նրանց ստեղծագործական գործունեությունը, ցուցաբերել անհատական մոտեցում բոլոր աշխատանքներում: Դպրոցում շարունակաբար տարբեր ձևաչափերով պետք է խրախուսուսել շնորհալի, ակտիվ աշակերտներին, հաշվի առնել նրանց նախասիրությունները և ձգտումները:

Պետք է խթանել սովորողների մասնակցությունը ինչպես առարկայական մրցույթներին և օլիմպիադաներին, այնպես էլ թեմատիկ ուսումնական և արտադպրոցական ամենատարբեր ստեղծագործական, գեղարվեստական և մարզական մրցույթներին:

Կրթության որակի բարձրացմանն ուղղված աշխատանքներում հաջողության հասնելու համար կարևոր է նաև սովորողների շրջանում հետևյալ հմտությունների ձևավորումն ու զարգացումը.

- *ստեղծագործական և քննադատական մտածողությունը,*
- *հաղորդակցությունը, մեդիագրագիտությունը,*
- *ճկունությունը,*
- *առաջնորդությունը, նախաձեռնողականությունը,*
- *արդյունավետությունը,*
- *համագործակցությունը, սոցիալականացումը:*

Կրթության որակը կարելի է բարձրացնել՝ բացահայտելով իրավիճակը գնահատելու միջոցով այն փոխելու հնարավորությունները:

Այս հիմնախնդիրներն իրենց արտացոլումն են գտնել դպրոցի զարգացման ծրագրում՝ հիմք դառնալով որոշակի նպատակների.

- *ուսումնական բարենպաստ միջավայրի ստեղծում,*
- *աշակերտակենտրոն ուսուցման զարգացում, ներառական կրթության ապահովում,*
- *կրթական պաշարների և ուսումնական գրականության բազայի որակական բարելավում,*
- *բարձր որակավորում և պատրաստվածություն ունեցող մանկավարժական անձնակազմի ապահովում,*
- *նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների շարունակական ներդնում,*
- *ուսուցիչների մասնագիտական որակների շարունակական բարելավում և արդիականացում,*
- *մենթորական համակարգի ներդնում,*
- *սովորողների մասնագիտական կողմնորոշմանը միտված միջոցառումների ընդլայնում. մեդիագրագիտության զարգացում,*
- *վերլուծության և մշտադիտարկման գործընթացների կիրառում, շահադրդող և խթանող մեխանիզմների ներդնում:*

2023-2024 ուստարուց սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքներում ընտանիքին համակողմանի օգնություն ցուցաբերելու, դասապատրաստումներին աջակցելու, ինքնուրույն սովորելու կարողությունները, ստեղծագործական ունակությունները զարգացնելու նպատակով նախատեսվում է դպրոցում կազմակերպել երկարօրյա ուսուցում՝ սովորողների և նրանց ծնողների կարիքների ուսումնասիրության հիման վրա:

Երկարօրյա ուսուցման կազմակերպման առջև դրվելուեն հետևյալ խնդիրները.

- *տնային պայմաններում երեխայի կրթական աջակցության անհնարինության դեպքում այդ գործընթացները կկազմակերպվեն դպրոցի ուսումնանյութական բազայի հիման վրա, այդ թվում՝ այլ հանրակրթական ուսումնական հաստատություններ հաճախող սովորողների համար,*
- *արտադասարանական աշխատանքներին սովորողների ակտիվ մասնակցության ապահովման միջոցով ստեղծել երեխայի ստեղծագործական ունակությունների զարգացման անհրաժեշտ պայմաններ,*
- *ԿԱՊԿՈՒ (այդ թվում՝ ցածր առաջադիմությամբ) սովորողների համար մատուցել լրացուցիչ կրթական ծառայություններ:*

***5/ Նորարարություն և տեխնոլոգիաներ.***

ՏՀՏ-ները ներկայումս ընդգրկված են հասարակական կյանքի բոլոր ոլորտներում, այդ թվում՝ կրթության բնագավառում և հանրակրթական դպրոցում: Մանկավարժական գիտության և կրթական նոր տեխնոլոգիաների զարգացումն ավելի է խթանում դասավանդման նոր մեթոդների, ուսուցման արդի ձևերի յուրացումն ու կիրառումը: Ուսուցման գործընթացը հագեցած պետք է լինի դասավանդման փոխներգործուն, համագործակցային ուսուցման կազմակերպման տարբեր եղանակներով, հեռավար և համակարգչային ուսուցման ձևերով:

Ուսումնական միջավայրում այս ամենի ձևավորումը պահանջում է որոշակի ռեսուրսներ՝ ժամանակ և միջոցներ: Հնարավոր չէ մեկ սեմինարի կամ վերապատրաստման դասընթացի միջոցով ուսուցիչների մոտ զարգացնել ուսուցման ժամանակակից մեթոդների, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների

(ՏՀՏ) արդյունավետ կիրառման կարողություններ և հմտություններ: Դպրոցում անհրաժեշտ է արդիականացնել ուսումնական միջավայրը, նպաստել անհրաժեշտ կարողությունների ձևավորումն ու զարգացումը մանկավարժների ու սովորողների շրջանում:

ՏՀՏ-ի ինտեգրումը ուսուցման գործընթացում բարձրացնում է դասի արդյունավետությունը. դրանց կիրառումը ուսուցումը դարձնում է ավելի հետաքրքիր և բովանդակալից, նպաստում է կրթության որակի բարձրացմանը:

Այստեղ նույնպես ուսուցման արդյունավետությունը պայմանավորված է ուսուցիչների պատրաստվածության մակարդակից: Երբեմն ուսուցիչների մի խումբ համարում է, որ ՏՀՏ կիրառումը դասի ընթացքում սոսկ չափորոշչային պահանջ է, դժվար իրականացվող, ժամանակատար և շեղում է աշակերտների ուշադրությունը հիմնական նյութից: Ավագ սերնդի ուսուցիչները համարում են, որ ՏՀՏ-ների կիրառումը երիտասարդների գործն է: Բայց հասկանալի է, որ ՏՀՏ-ների ներառման բացը նվազեցնում է ուսուցման արդյունավետությանը, իջեցնում ուսուցման կազմակերպման այլընտրանքային և արդիական հնարավորությունների աստիճանը:

ՏՀՏ-ի կիրառման և ուսուցման գործընթացի ինտեգրումը նպաստում են ուսուցչի նոր կերպարի ձևավորմանը: Ուսուցիչը ՏՀՏ-ի միջավայրում հանդիսանում է ոչ միայն ինֆորմացիայի, գիտելիքների և փաստերի հաղորդող, այլև սովորողներին օգնում է ընկալելու ուսուցման գործընթացը:

Այս հիմախնդիրներն իրենց արտացոլումն են գտել դպրոցի զարգացման ծրագրում՝ հիմք դառնալով որոշակի նպատակների.

- *ՏՀՏ-ների կիրառման միջոցով ուսուցման արդյունավետության բարձրացում:*
- *Մանկավարժների՝ ՏՀՏ միջոցների կիրառման համար անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների տիրապետման հնարավորությունների զարգացում:*
- *Անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի ապահովում:*
- *ՏՀՏ ներգրավմամբ տարաբնույթ միջոցառումների պլանավորում և անցկացում:*





# 3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

Զարգացման ծրագրի նպատակներն ու խնդիրները սահմանվում են իրավիճակի վերլուծության և հիմնախնդիրների բացահայտման գործընթացի արդյունքում:

*Նպատակը* ցանկալի և նախապես կանխատեսելի վերջնական արդյունքն է:

Առանձնացվում են նպատակներին և խնդիրներին ներկայացվող հետևյալ պահանջները.

- ✓ նպատակը պետք է լինի *կոնկրետ և չափելի*: Չնայած հիմնականում նպատակը ձևակերպվում է որակական առումով, սակայն վերջնական արդյունքները պետք է արտահայտված լինեն քանակական տվյալներով,
- ✓ նպատակը ժամանակային առումով պետք է լինի *որոշակի*. յուրաքանչյուր նպա-տակ սահմանվում է որոշակի ժամանակահատվածի համար,
- ✓ նպատակը պետք է *իրատեսական և հասանելի* լինի, այն պետք է սահմանվի՝ հաշվի առնելով դպրոցի իրական հնարավորությունները,
- ✓ նպատակները պետք է լինեն *փոխհամաձայնեցված*, չպետք է հակասեն իրար: Դրանք պետք է լրացնեն միմյանց և նպատակաուղղված լինեն դպրոցի տեսլականի իրականացմանը,
- ✓ նպատակը պետք է լինի *ճկուն:* Քանի որ արտաքին պայմանները արագ են փոփոխվում, և շատ դեպքերում հնարավոր չէ կանխատեսել դրանք, ուստի արտաքին և ներքին գործոնների փոփոխություններին համընթաց ուսումնական հաստատության նպատակները պետք է պարբերաբար վերանայվեն:
- ✓ յուրաքանչյուր նպատակի իրականացման համար պետք է սահմանվեն որոշակի խնդիրներ,
- ✓ յուրաքանչյուր խնդրի իրականացման համար անհրաժեշտ է մշակել համապատասխան գործողությունները և ակնկալվող արդյունքները՝ նշելով դրանց պատասխանատուները (կատարողները), ժամկետները և իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցները,
- ✓ սահմանված գործողությունները պետք է նպատակաուղղված լինեն տվյալ խնդրի լուծմանը և ձևակերպված լինեն հստակ, առանց երկիմաստության. տվյալ գործողության արդյունքը պետք է հնարավոր լինի ճշգրիտ չափել,
- ✓ ակնկալվող արդյունքները պետք է լինեն արտահայտված կոնկրետ ցուցանիշներով (թվեր, տոկոսներ, բնութագրիչներ) և հստակ ընկալելի լինեն տվյալ գործողությունն իրականացնող պատասխանատուների և կատարողների համար:

Նպատակների մի մասը սահմանվում են՝ ելնելով դպրոցի առկա հիմնախնդիրներից: Սակայն դրանք կարող են պայմանավորված լինել նաև տվյալ դպրոցի առաքելությունից բխող նորարական նախաձեռնություններով:

Կարևոր է Զարգացման ծրագրում հստակ ձևակերպել լուծում պահանջող խնդիրները և դրանք ներկայացնել որպես ցանկալիի և իրականի հակադրություն: Իրավիճակի գնահատականը վերհանելու համար անհրաժեշտ է կազմակերպել իրականի հետազոտություն և վերլուծություն, անցկացնել ուսումնասիրություն և բացահայտել խնդիրը:

Այս գործընթացում աշխատանքները կարելի է պլանավորել և՛ իրավիճակի գնահատականից, և՛ նպատակների հստակ սահմանումից:

## «Շվանիձորի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի զարգացման ծրագրի նպատակներն են.



- *Պետության կրթական զարգացման ռազմավարությունների և տեսլականին համահունչ հանրակրթական գործընթացի ապահովում:*
- *Որակյալ հանրակրթության ապահովում, որը կձևավորի արդեն միջին դասարաններից մասնագիտական կողմնորոշում ունեցող շրջանավարտներ:*
- *Պետության, համայնքի ու հասարակության կարիքներին ու ազգային արժեհամակարգին համապատասխան սերնդի դաստիարակում:*
- *Վաղ տարիքից երկրի ու համայնքի խնդիրներն ու հնարավորությունները գիտակցող պատասխանատու քաղաքացու ձևավորում:*

Սահմանված արդյունքներին հասնելու համար դպրոցի Զարգացման ծրագրում նախատեսված են հետևյալ քայլերը.

- ✓ դպրոցում բարենպաստ կրթական միջավայրի ապահովում,
- ✓ առարկայական կաբինետների ձևավորում, լաբորատորիաների վերազինում և գործարկում,
- ✓ դաստիարակչական գործընթացի կատարելագործում,
- ✓ մանկավարժական համակազմի մասնագիտական որակավորման բարձրացում,
- ✓ ժամանակակից կրթական պահանջները բավարարող ուսումնական միջավայրի ապահովում,
- ✓ կրթության որակի ներքին գնահատման համակարգի կատարելագործում,
- ✓ սովորողների կրթության բովանդակության վերազինում,
- ✓ սովորողների հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդում, ազգային և համամարդկային արժեքների ձևավորում և զարգացում,
- ✓ սովորողների գործնական հմտությունների զարգացմանն ուղղված ուսուցման ժամանակակից մեթոդների ներդնում,
- ✓ սովորողների մասնագիտական կողմնորոշման ուղղվածության և կրթության շարունակականության համար անհրաժեշտ նախադրյալների ձևավորում,
- ✓ խորհրդակցական մարմինների գործունեության խթանում և դերի բարձրացում,
- ✓ արտաքին կապերի ձևավորում և ընդլայնում,
- ✓ ուսումնական գործընթացում տեղեկատվական և հաղորդակցական ժամանակակից տեխնոլոգիաների օգտագործման արդյունավետության բարձրացում,
- ✓ կրթության մատչելիության ապահովում, դպրոցում այնպիսի հոգեբանամանկավարժական միջավայրի ձևավորում, որը կնպաստի յուրաքանչյուր սովորողի համար (այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող) որակյալ կրթության ապահովմանը:
- ✓ դպրոցի կառավարման ժողովրդավարական միջավայրի առավել ընդլայնում,
- ✓ դպրոցի զարգացման գործում շահառուների մասնակցության արդյունավետության բարձրացում:

Ընդհանուր առմամբ, սահմանված նպատակներից բխող խնդիրների լուծումը պետք է նպաստի դպրոցի զարգացմանը: Ուստի արդյունավետ ԴԶԾ կազմելու համար խնդիրները սահմանվել են ոչ թե ընդհանրական, այլ սահմանված նպատակից բխող ակնկալվող արդյունքների ձևաչափով:

Դպրոցի նպատակները ուղենիշ են հանդիսանում խնդիրների և գործողությունների պլանավորման համար: *Խնդիրները բխում են դպրոցի նպատակներից*. դրանք ավելի մասնավոր են, քան նպատակները, այսինքն՝ կարճ ժամանակահատվածում իրականացվող գործողությունների վերաբերյալ սահմանումներ են: *Յուրաքանչյուր նպատակի իրականացման համար պետք է սահմանել որոշակի փոխհամաձայնեցված խնդիրներ:*

Ըստ բնագավառների և տիպերի՝ խնդիրները կարելի է ձևակերպել հետևյալ կերպ.

- ✓ *նյութատեխնիկական,*
- ✓ *նորմատիվ-իրավական,*
- ✓ *կազմակերպչական,*
- ✓ *կադրային,*
- ✓ *տեղեկատվական,*
- ✓ *հետազոտական,*
- ✓ *ստեղծագործական և ձևավորման,*
- ✓ *շփման,*
- ✓ *գնահատման:*

Նպատակների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է ունենալ աշխատանքային ծրագիր, առաջ քաշել հիմնախնդիրներ, որոնք հնարավորություն կտան առանձին քայլերով հասնելու առավելագույն արդյունքների և նպատակաուղղված կնպաստեն դպրոցի առաքելության իրականացմանը:

ԴԶԾ-ով նախատեսված են նաև, որպես հեռակա նպատակներ, հանրակրթական այլընտրանքային (փորձարարական, հեղինակային) ծրագրերով դպրոցի կողմից իրականացվող առանձին բովանդակային, կրթական տեխնոլոգիաների և ուսուցման կազմակերպման ոչ ավանդական ձևերի զարգացման ուղղությամբ իրականացվող նորարարական գործընթացները:

Դրանք հանրակրթական դպրոցներում հիմնականում մեկ, առանձին դեպքերում՝ մի քանի ուղղություններով իրականացվող փոքր կրթական ծրագրեր են, որոնք հնարավոր է իրականացնել առանձին մասնագետի կամ մասնագիտական խմբի կողմից որոշակի ժամկետով՝ նախանշված ուղղությամբ արդյունավետ ուսումնառության կազմակերպման նպատակով:

Կարևոր է ընդգծել, որ դպրոցը, որպես գործուն միջավայր, արագ և անմիջականորեն արձագանքում է հասարակական, գիտակրթական և տեխնոլոգիական փոփոխություններին, որի արդյունքում նրանում ձևավորվում է նոր միջավայր: Այդ փոփոխություններին համահունչ՝ անհրաժեշտություն է առաջանում դպրոցում ևս ներդնել նորարարական այնպիսի մոտեցումներ, որոնցով կկարևորվեն ընտրված ուղղություններով նպատակների իրականացումը և ընդհանուր զարգացման ապահովումը:

Դպրոցը պետք է համընթաց քայլի հասարակական և կրթական նոր պահանջներին ու փոփոխություններին: ԴԶԾ-ով կանխորոշվում է դպրոցի վաղվա օրը՝ նպաստելով արտաքին փոփոխություններին համահունչ գործունեությանը և ի վերջո՝ հաջողության պատմության ձևավորմանը:

## «Շվանիձորի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի զարգացման ծրագրի խնդիրներն են.

Սահմանված նպատակներին հասնելու համար դպրոցի Զարգացման ծրագրում ձևակերպվել և սահմանվել են հետևյալ խնդիր-ուղղությունները.



- *Դպրոցի շենքային պայմանների և նյութատեխնիկական բազայի արդիականացում,*
- *կրթության որակի և սովորողների առաջադիմության բարձրացում,*
- *համագործակցության խորացում դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմինների հետ,*
- *ուսուցչամանկավարժական անձնակազմի կարողությունների զարգացում,*
- *համագործակցության ընդլայնում պետական և համայնքային կառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների հետ,*
- *ուսումնական միջավայրի բարելավում,*
- *նորարական ու ստեղծարար տեխնոլոգիաների տեղայնացում,*
- *դպրոցի գործունեությունը կարգավորող իրավական ակտերի շուրջ աշխատանքների իրականացում:*

*Ծրագրի ռազմավարական **գլխավոր ուղղությունը** ներդաշնակորեն զարգացած, սոցիալապես գործուն և ստեղծագործ, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորմանը միտված կրթության համակարգի առաջանցիկ զարգացումն է՝ որպես պետականության ամրապնդման և հասարակության սոցիալ-տնտեսական առաջընթացի գործոն:*

Զարգացման ծրագրով սահմանված նպատակների իրագործման և խնդիրների լուծման ***հիմնական արդյունքը 21-րդ դարի դպրոցի ստեղծումն է,*** որը կունենա.

- որակյալ կրթություն և հրապուրիչ կրթական միջավայր,
- բարձր որակավորում ունեցող ուսուցչամանկավարժական համակազմ,
- ինքնազարգացմամբ մոտիվացված սովորողներ,
- մրցունակ սերունդ ձևավորելու կարողություններ,
- արդի նյութատեխնիկական բազա, այդ թվում՝ ՏՀՏ,
- առաջադեմ կրթական տեխնոլոգիաներ,
- դպրոցի խնդիրներով մտահոգ խորհրդակցական մարմիններ:

Դպրոցի Զարգացման ծրագրով նախանշված են հաստատության ամբողջական նպատակները և խնդիրները, որոնք բխում են դպրոցի, համայնքի կարիքներից և համապատասխանում են առկա հնարավորություններին:

Սահմանված առանձին խնդիրների լուծման համար նախատեսված են հետևյալ աշխատանքները.

1. Մանկավարժների մասնագիտական որակավորման բարձրացման միջոցառումներ.

- *Մշակել կազմակերպման և ղեկավարման այնպիսի մեխանիզմներ, որոնք պետք է ուղղված լինեն մանկավարժների մասնագիտական կատարելագործմանը:*
- *Ստեղծել կազմակերպչական այնպիսի նախադրյալներ, որոնք կապահովեն դպրոցի մանկավարժական համակազմի մասնագիտական ու մեթոդական աշխատանքների որակական բարելավումը:*
- *Խթանել ուսուցիչների ներգրավումը մասնագիտական և մեթոդական զարգացմանը նպաստող վերապատրաստումների:*
- *Շահադրդել ուսուցիչներին՝ նախագծելու և իրականացնելու հետազոտական և նախագծային աշխատանքներ. ստեղծել պայմաններ մանկավարժների փորձարարական աշխատանքների իրականացման համար:*
- *Ձևավորել անհրաժեշտ միջավայր՝ մանկավարժական փոխգործակցության և առաջավոր փորձի փոխանակման համար:*

2. Կրթության որակի բարձրացման միջոցառումներ.

- *Ապահովել սովորողների ստեղծագործական և նախագծային աշխատանքների խթանումը, նրանց վերլուծական, քննադատական մտածողության, ինքնազարգացման, կարողունակությունների և հմտությունների կատարելագործման, տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման ունակությունների զարգացումը:*
- *Ձևավորել էլեկտրոնային գրադարանային հարթակ: Ստեղծել պայմաններ սովորողների գրական գործունեության ակտիվացման և ընդլայնման համար:*
- *Բարձրացնել սովորողների գործնական ունակությունների զարգացումը, զարգացնել ֆիզիկական և ռազմահայրենասիրական դաստիարակության ամրապնդմանն ուղղված միջոցառումները:*
- *Նպաստել դասի արդյունավետությունը բարձրացնող մեխանիզմների կիրառմանը՝ արդյունավետ ուսուցման տեխնոլոգիաների, ակտիվ ուսուցման մեթոդական հնարների, ուսումնատեխնիկական անհրաժեշտ պարագաների, ուսուցման արդի և փոխներգործուն միջոցների ներդրմամբ:*
- *Պլանավորել և շարունակաբար անցկացնել թեմատիկ-ուսումնական մրցույթներ, առարկայական շաբաթներ, բաց դասեր, գործնական աշխատանքներ:*
- *Ընդլայնել ժամանակակից տեխնիկական միջոցներով կահավորված դասարանների համալրումը և հնարավորությունները:*
- *Դասավանդման որակը բարձրացնելու նպատակով պարբերաբար կազմակերպել վերապատրաստումներ, դասախոսություններ, հանդիպումներ, կոնֆերանսներ, ուսուցողական և բաց դասեր, կատարել դասալսումներ, մեծ ուշադրություն դարձնել դասավանդողների գնահատելու ընթացակարգերի կիրառմանը:*
- *Ընդլայնել կազմակերպվող լրացուցիչ կրթական ծառայությունները, ներառել գեղագիտության և սպորտի ոլորտները:*

Ուսուցումն առավել արդյունավետ է,
երբ այն ուրախություն է պատճառում:
Թու Կլայն.



3. Կառավարման և խորհրդակցական մարմինների դերի բարձրացման միջոցառումներ.

Դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմիններում առկա է գործունեության արդյունավետ մեխանիզմների զարգացման անհրաժեշտություն:

*<u>ա) Կառավարման խորհուրդ.</u>*

Առավել արդյունավետ գործունեության հասնելու համար անհրաժեշտ է բարձրացնել կառավարման խորհրդի ներգրավածությունը հետևյալ ուղղություններում.

- *հաստատության ընդհանուր և ուսումնադաստիարակչական գործունեության նկատմամբ ընթացիկ վերահսկողության իրականացում,*
- *զարգացման ծրագրի իրականացման վերահսկողություն,*
- *անհրաժեշտ հաշվետվությունների քննարկում և վերլուծություն,*
- *ներքին և արտաքին գնահատման արդյունքների վերլուծություն,*
- *հիմնադրի կողմից իրեն վերապահված և (կամ) դպրոցի կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորությունների կատարում:*

*<u>բ) Ծնողական խորհուրդ.</u>*

- *ուսումնադաստիարակչական աշխատանքներում ծնողական խորհրդի մասնակցության դերի բարձրացում,*
- *ծնողական խորհրդի և խորհրդակցական մյուս մարմինների միջև փոխգործակցության մեխանիզմների կիրառմամբ առկա կապերի ամրապնդում,*
- *ծնողական խորհրդի անդամների ներգրավում վերապատրաստման դասընթացների և սեմինարների,*
- *սովորողների ուսուցման և դաստիարակության գործընթացներում միասնական պահանջների ձևավորում,*
- *արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներում ծնողական խորհրդի մասնակցության խթանում,*
- *սովորողների հանգստի և ժամանցի կազմակերպման գործում աջակցության մեխանիզմների մշակում,*
- *փոխվստահության և համագործակցության ընդհանուր մթնոլորտի ձևավորում:*

*<u>գ) Աշակերտական խորհուրդ.</u>*

- *աշակերտական խորհրդի արդյունավետ գործունեության խթանում,*
- *սովորողների ինքնավարության և ինքնակառավարման մեխանիզմների կատարելագործում,*
- *սովորողների համար առողջ և բարենպաստ սոցիալ-հոգեբանական մթնոլորտի ամրապնդում,*
- *սովորողների առողջության, անվտանգության, սոցիալական ապահովության ուղղությամբ իրականացվող միջոցառումներին աշակերտական խորհրդի մասնակցության օժանդակում,*
- *սովորողների կրթության և ինքնակրթության, նրանց համակողմանի զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացման ապահովում,*
- *դպրոցում այնպիսի միջավայրի ձևավորում, որը կնպաստի յուրաքանչյուր սովորողի (այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող) ստեղծագործական ազատության ապահովմանը:*

# 4. ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

Դպրոցի Զարգացման ծրագրում՝ ըստ ոլորտների սահմանված նպատակների և խնդիրների, մշակված են համապատասխան գործողությունները, հստակ ներկայացված են պատասխանատուները (կատարողները) և ժամկետները:

Հաստատության համակարգված զարգացումը Ծրագրի միջոցով ներկայացնելը հիմք է ստեղծում հաստատության գործունեության <u>*աշխատանքային տարեկան պլանի*</u> մշակման համար, որը տվյալ հաստատության միջնաժամկետ (մեկ ուսումնական տարվա համար կազմված) զարգացման ծրագրային փաստաթուղթն է:

Հաստատության գործունեության տարեկան աշխատանքային ծրագրի դրույթները մշակվում են դպրոցի Զարգացման ծրագրի հիման վրա: Ընդ որում, երկարաժամկետ, սովորաբար 5 տարվա համար մշակված ծրագիրը պարբերաբար տնօրենի կողմից վերանայվում է և համապատասխան փոփոխություններով հանդերձ՝ ներկայացվում կառավարման խորհրդի հավանությանը:

Գործողությունները պլանավորելիս հաշվի են առնվում հետևյալ հանգամանքները.

- ✓ *Արդյո՞ք սահմանված գործողությունները նպատակաուղղված են տվյալ խնդրի լուծմանը:*
- ✓ *Արդյո՞ք գործողությունները ձևակերպված են հստակ, չեն պարունակում երկիմաստություն, բոլոր կատարողները դրանք միանշանակ ե՞ն ընկալում:*
- ✓ *Արդյո՞ք հնարավոր է ճշգրիտ չափել տվյալ գործողության արդյունքը:*
- ✓ *Չե՞ն սահմանված այնպիսի գործողություններ, որոնց արդյունքների հասանելիությունը իրատեսական չէ:*
- ✓ *Արդյո՞ք բոլոր գործողությունների ամբողջությունը ապահովում է տվյալ խնդրի լուծումը:*

ԴԶԾ-ի իրականացման փուլում սահմանված նպատակների և խնդիրների հստակեցման և ճշգրտման արդյունքում գործողությունները կարող են վերանայվել՝ պայմանավորված դպրոցի տարեկան աշխատանքային պլանում ԴԶԾ-ից բխող նպատակների և դրանց խնդիրների ժամանակային փոփոխություններով և արտաքին ու ներքին գործոնների ազդեցություններով:

Յանկացած գործողության համար սահմանվում են ակնկալվող արդյունքները: Դրանք պետք է լինեն հավաստի, չափելի, ապահովեն տվյալ խնդրի համապարփակ ու լիարժեք իրականացումը: Ակնկալվող արդյունքները պետք է արտահայտվեն կոնկրետ ցուցանիշներով (թվեր, տոկոսներ, բնութագրիչներ) և միանշանակ ընկալելի լինեն տվյալ գործողությունն իրականացնող պատասխանատուների և կատարողների համար:

<u>***Ակնկալվող արդյունքներին ներկայացվող պահանջներն են.***</u>



- ➔ *տեսանելի են,*
- ➔ *բխում են հիմնախնդրի հստակ պահանջից,*
- ➔ *ստուգելի են,*
- ➔ *կապված են նպատակների և խնդիրների հետ,*
- ➔ *իրատեսական են (կապը ռեսուրսների և ռիսկերի հետ):*

Գործողությունների պլանավորումն իրականացվում է մի քանի փուլով: Դա կարելի է ներկայացնել այսպես.

| Գործողությունների պլանավորման փուլերը | Գործողությունները |
|---|---|
| **Նախապատրաս-տական փուլ** | Ռեսուրսների գնահատում |
| | Ռիսկերի, դժվարությունների և սահմանափակումների վերլուծություն |
| | Աշխատակարգի մշակում, պատասխանատուների ընտրություն |
| | Անհրաժեշտ միջոցների գնահատում |
| | Հանձնարարությունների հստակեցում |
| **Հիմնական փուլ** | Հանձնարարությունների բաշխում, ժամկետների որոշում |
| | Պոտենցիալ ռեսուրսների վերածումը իրականի |
| | Հանձնարարությունների կատարում |
| | Միջանկյալ գնահատում, իրականացման գործընթացում անհրաժեշտ փոփոխությունների կատարում |
| **Ավարտական փուլ** | Ստացված արդյունքների համեմատում ակնկալվողների հետ |
| | Սկզբնական պլանի համեմատում իրականի հետ |
| | Աշխատանքի գնահատում |
| | Վերջնական հաշվետվության ներկայացում |

Ինչպես արդեն նշվեց, յուրաքանչյուր գործողության համար անհրաժեշտ է սահմանել հստակ, իրատեսական ժամկետներ: Պետք է հաշվի առնել, որ ԴԶԾ-ի իրականացման տարեկան պլանում դրանք կարող են կրել որոշ փոփոխություններ: Ժամկետները սահմանելիս կարելի է օգտագործել գործողությունների պլանավորման սխեմաներ:

ԴԶԾ-ի նպատակները, խնդիրները և գործողությունները փոխկապակցված են, ըստ ենթադասության՝ բխում են մեկը մյուսից և որպես մեկ ամբողջություն՝ հանգեցնում են ուսումնական հաստատության զարգացմանը բոլոր ուղղություններով:

**Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողությունների և միջոցառումների ժամանակացույցը հանգամանորեն ներկայացված է* ***Աղյուսակ 1-ում:***

# 5. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ

Զարգացման ծրագրի արդյունավետ իրականացման համար այն պարունակում է տեղեկատվություն ծրագրի կատարման պատասխանատուների վերաբերյալ: Ընդ որում, Ծրագրի մշակումից հետո այդ տեսանկյունից անհրաժեշտ է այն պարբերաբար վերանայել՝ հաշվի առնելով հաստատության գործունեության մեջ կատարվող ընթացիկ փոփոխությունները, ինչպես նաև հանրակրթության քաղաքականության ոլորտում իրականացվող բարեփոխումները. դրանց հետևանքով կարող են փոխվել նաև պատասխանատուները:

Յուրաքանչյուր գործողություն իրականացնելու համար ԴԶԾ-ում առանձնացվում են պատասխանատուներ (կատարողներ): Պետք է հաշվի առնել, որ գործողությունն իրականացնող պատասխանատուն և կատարողներն ունենան թիմային աշխատանք կատարելու փորձ և հմտություններ, հակառակ դեպքում կմեծանա տվյալ գործողությունից ակնկալվող արդյունքների ռիսկայնությունը: Անհրաժեշտ է նաև պլանավորել պարբերական հաշվետվությունների ձևաչափ (մեխանիզմ):

Դպրոցի զարգացման ծրագրի իրականացումն ապահովելու համար անհրաժեշտ է բոլոր պատասխանատուների փոխհամագործակցված և փոխներգործուն աշխատանքը: Դրա պլանավորման և իրականացման պատասխանատուն առաջին հերթին հաստատության տնօրենն է: Կարևոր է ընդգծել, որ կառավարման ժողովրդավար և արդյունավետ մեխանիզմների ապահովման հետ մեկտեղ անհրաժեշտ է հստակ իրականացնել գործողությունների պատասխանատուների նշանակում: Ցանկալի արդյունքների հնարավոր է հասնել բացառապես հաստատության բոլոր աշխատակիցների՝ ուսումնական և դաստիարակչական ոլորտների ղեկավարների, առանձին ստորաբաժանումների պատասխանատուների, ուսուցիչների, մանկավարժական աշխատողների, ինչպես նաև՝ ուսումնաօժանդակ (վարչատնտեսական) մասի աշխատողների համընդհանուր աշխատանքի շնորհիվ:

ԹԻՄԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ











*ԴԶԾ-ի յուրաքանչյուր բաղադրիչի կատարման համար պատասխանատուները ըստ ուղղությունների հանգամանորեն ներկայացված են **Աղյուսակ 1-ում:***

# 6. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ




Դպրոցի զարգացման պլանավորումը հիմք է առկա իրավիճակից բխող նպատակների և խնդիրների սահմանման համար: Դպրոցի զարգացման ուղղությունները ընդգրկում են այն հիմնական աշխատանքները, որոնք ԴԶԾ-ի իրականացման գործընթացում պետք է հանգեցնեն շոշափելի ու հստակ արդյունքների: Պետք է սահմանել յուրաքանչյուր գործողության առանձնահատկությունից բխող գնահատման չափանիշները, որոնց միջոցով հնարավոր կլինի չափել ակնկալվող արդյունքը:

ԴԶԾ-ի գնահատումը ծրագրի գործողություններով պլանավորված և իրականացված արդյունքների համեմատման գործընթաց է: Բնական է, որ որպես գնահատման գործիքներ ծառայում են յուրաքանչյուր գործողության առանձնահատկությունից բխող ցուցանիշները, որոնց միջոցով պետք է չափվեն ակնկալիքների կատարողականները, այլ կերպ ասած, ԴԶԾ-ն իրականացնող ու վերահսկող շահառուների (դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմիններ և այլն)՝ գործողությունների արդյունքներից բավարարվածության աստիճանը:

ԴԶԾ-ն մշակելիս հիմք են ընդունվել դպրոցի կրթական, դաստիարակչական և այլ ցուցանիշները: Դրանք վիճակագրական այն տվյալներն են, որոնք թույլ են տալիս ինչպես տեղեկություն ստանալ կրթության ընթացիկ վիճակի մասին, այնպես էլ վերահսկել ուսումնական հաստատության գործունեության արդյունավետությունը: Ցուցանիշները վիճակագրական պարզ տվյալներ չեն, այլ կրում են որոշակի ածանցյալ տեղեկույթ:

Դպրոցի կրթական և այլ ցուցանիշները անհրաժեշտ են նաև ժամանակի ընթացքում դպրոցի գործունեության մեջ տեղի ունեցող փոփոխությունները, ուղղությունները բացահայտելու և գնահատելու համար: Դրանք նաև միջոցներ են, որոնց օգնությամբ հնարավոր է հետևել դպրոցում իրականացվող կրթադաստիարակչական բոլոր գործընթացներին, եթե դրանք հաշվարկվում են որոշակի կանոնակարգված պարբերականությամբ:

Ցուցանիշներն ամբողջացնում, ամփոփում են մեծ ծավալի վիճակագրական տվյալներ և տալիս են իրավիճակի ընդհանուր պատկերը:

Գոյություն ունի դպրոցի կրթական ցուցանիշների երկու հիմնական տեսակ՝ *պարզ և բարդ* (գործունեության ցուցանիշներ):

***<u>Պարզ ցուցանիշները /բնութագրիչները/</u>*** բացահայտում և բնութագրում են դպրոցի գործունեության միայն մեկ բաղադրիչը տվյալ պահին կամ որոշակի ընտրված ժամանակահատվածում: Դրանք պարզ չափումներ են, որոնք արտահայտվում են թվերով կամ տոկոսներով:

Օրինակ՝

- ✓ *Ուսուցիչների և աշակերտների ընդհանուր թիվը,*
- ✓ *տվյալ դասարանում սովորող աշակերտների ընդհանուր թիվը,*
- ✓ *առաջին դասարանցիների տոկոսը աշակերտության ընդհանուր թվակազմում,*
- ✓ *բարձրագույն մասնագիտական կրթությամբ ուսուցիչների տոկոսը կամ թիվը ուսուցիչների ընդհանուր թվում,*
- ✓ *և այլն:*

Պարզ ցուցանիշները սովորաբար չեն ներկայացնում դպրոցի գործունեության որակական պատկերը, բայց դրանք շատ օգտակար են դպրոցի քանակական գնահատումների և կանխորոշումների համար:

Դպրոցի գործունեությունը հասկանալու, դրա արդյունավետությունը գնահատելու համար անհրաժեշտ են նրա գործառույթները, այսինքն՝ դպրոցում տեղի ունեցող գործընթացները, փոփոխությունները չափող ցուցանիշներ:

***<u>Գործունեության (բարդ) ցուցանիշներն</u>*** արտահայտում են կրթական համակարգի մեկ բաղադրիչի փոխհարաբերությունը մեկ այլ բաղադրիչի նկատմամբ: Գործունեության (բարդ) ցուցանիշները հաշվարկվում են առնվազն երկու տիպի պարզ ցուցանիշների համադրումից: Գործունեության ցուցանիշները ցույց են տալիս առկա միջոցների և ստացվող արդյունքների, կամ առկա միջոցների և կատարվող գործընթացների միջև կապը:

Օրինակ՝

- ✓ *ուսուցիչ-աշակերտ թվի հարաբերակցությունը,*
- ✓ *մեկ աշակերտին բաժին ընկնող ուսումնական տարածքը,*
- ✓ *դասագրքերի թիվը մեկ աշակերտի հաշվով,*
- ✓ *տվյալ առարկայից դասարանի սովորողների միջին գնահատականը կամ նույն առարակայից յուրաքանչյուր սովորողի միջին գնահատականը տվյալ ժամանակահատվածի համար և այլն:*

Գործունեության ցուցանիշները հաշվարկվում են համապատասխան տվյալների առկայության դեպքում վերջիններիս հավաքագրումից և ամփոփումից հետո: Փաստորեն, չնայած ցուցանիշները բնութագրում և արտահայտում են իրավիճակը ժամանակի տվյալ պահին, սակայն հիմնականում դրանք հաշվարկվում են որոշակի պարբերականությամբ:

— — — — — —

Ծրագրի իրականացման գնահատման ամենաարդյունավետ միջոցը հնգամյա ծրագրի հիման վրա կազմված դպրոցի գործունեության տարեկան աշխատանքային պլանների կատարողականներն են:

Գնահատման և վերահսկողության կարևոր մեխանիզմ է նաև ուսումնական հաստատության գործունեության ներքին և արտաքին գնահատումը, որը նախատեսված է «Հանրակրթության մասին» օրենքով:

Ներքին գնահատումն ուսումնական հաստատության կողմից իր գործունեության վերլուծությունն է: Ներքին գնահատումն իրականացվում է տարեկան մեկ անգամ՝ մինչև նոր ուսումնական տարվա սկիզբը: Ներքին գնահատմանը մասնակցում են վարչական և մանկավարժական աշխատողները, սովորողները և ծնողները: Գնահատման հաշվետվությունը ներկայացվում է ուսումնական հաստատության խորհրդին, մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհուրդներին:

Ուսումնական հաստատության արտաքին գնահատման նպատակը դրա գործունեության արդյունավետության գնահատումն է՝ նմանատիպ մյուս հաստատությունների համեմատությամբ:

Դպրոցի զարգացման առանձին ուղղություններում ակնկալվող արդյունքները կարելի է ներկայացնել հետևյալ ոլորտներով.

**<u>Ա. Մանկավարժական համակազմի որակական բարելավում.</u>**

- ➢ Կազմակերպման և ղեկավարման մեխանիզմների մշակում, որոնք պետք է ուղղված լինեն մանկավարժների մասնագիտական որակավորման մակարդակի բարձրացմանը:

- Աշխատակարգային կազմակերպչական այնպիսի նախադրյալների ձևավորում, որոնք կապահովեն դպրոցի մանկավարժական համակազմի մեթոդական աշխատանքի որակական բարելավումը:




- Հետազոտական աշխատանքներ կատարելու շահադրդում, պայմանների ստեղծում ուսումնական փորձարարական աշխատանքների իրականացման համար:

<u>Սպասվող արդյունքները.</u>

- *մանկավարժների մասնագիտական որակի մակարդակի բարձրացում,*
- *մեթոդական աշխատանքների հիմնական ուղղությունների և բովանդակության զարգացում,*
- *մանկավարժների մեթոդական աշխատանքների որակի բարձրացում,*
- *մեթոդական և դիդակտիկ նյութերի ընտրության ու մշակումների ուղղությամբ մանկավարժների միասնական մոտեցումների ապահովում,*
- *Մանկավարժների մասնագիտական զարգացման ունակությունների կատարելագործում և մրցունակության ապահովում:*

**<u>Բ. Սովորողների կրթության կառուցվածքի և բովանդակության վերազինում.</u>**

- ✓ Դպրոցի նորմատիվային համակարգի ամրապնդում դաստիարակության ոլորտում, դպրոցի կրթական ծրագրերի շրջանակում սովորողների ուսուցման ու զարգացման ապահովում:
- ✓ Սովորողների իրավունքների պահպանում՝ հաստատության կանոնադրության և օրենսդրական չափանիշներին համապատասխան:
- ✓ Մեթոդական և դիդակտիկ նյութերի ապահովում, առկա բազայի համալրում:
- ✓ Սովորողների համար ուսումնական հետազոտությունների կազմակերպման և իրականացման նպաստավոր պայմանների ստեղծում:
- ✓ Լրացուցիչ կրթական ծրագրերի ներդնում:

Սպասվող արդյունքները.

- ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացում,
- դաստիարակության համակարգի բարելավում,
- ուսումնական գործընթացի համակարգված մեթոդական և դիդակտիկ ապահովվածություն,
- սովորողների հետազոտական և նախագծային ուսուցման շահադրդում, կարողունակությունների ձևավորում և զարգացում:
- լրացուցիչ հանրակրթական ծրագրերի ուսուցման կազմակերպում:

ԱՐՄԱԹ
ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ






**ԴԶԾ կատարման արդյունքների գնահատման չափանիշները հանգամանորեն ներկայացված են **Աղյուսակ 2-ում:***

# 7. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ

*Ռիսկերը* ցանկացած նպատակադրման իրականացմանը խոչընդոտող հնարավոր անցանկալի գործոններն են: Փոփոխություններին ուղղված ցանկացած գործողություններ (միջոցառումներ) կապված են ռիսկերի հետ: Ռիսկերի ոչ ճշգրիտ կանխատեսումը կարող է հանգեցնել դպրոցի զարգացման առանձին ոլորտներում պլանավորված աշխատանքների թերացմանը և Զարգացման ծրագրի` այդ ուղղությամբ նպատակադրված խնդիրների և գործողությունների իրականացման արդյունավետության անկմանը:

ԴԶԾ-ում հնարավոր *ռիսկերի պլանավորումը* դպրոցի զարգացման գործընթացների արդյունավետության ապահովման համար խիստ կարևոր է: Առանց ռիսկերի կանխատեսման Զարգացման ծրագրի իրականացման առանձին փուլերում և ուղղություններում ձախողվում է ակնկալվող գործողությունների կատարողականը, սահմանված վերջնարդյունքները չեն ապահովվում:

Զարգացման ծրագրի մշակման գործընթացում ռիսկերը հնարավոր է պլանավորել դպրոցի գործունեության որևէ ոլորտի համար նպատակներ ու խնդիրներ սահմանելու փուլում, քանի որ այդ ժամանակ հեռապատկերում ընդհանուր գծերով ուրվագծվում են սահմանված նպատակի և դրանից բխող խնդիրների իրականացման հնարավոր խոչընդոտները և ձախողումները: Միաժամանակ, Ծրագրի հնարավոր ռիսկերը առավել տեսանելի են դառնում ծրագրի գործողությունների մշակման, դրանց իրականացման ժամանակացույցի և պատասխանատուների պլանավորման փուլերում:

ԴԶԾ-ի նպատակադրումների իրագործումը խոչընդոտող ռիսկերը բազմաբովանդակ են և դրանք, ըստ ազդեցության ուղղությունների, կարելի է խմբավորել հետևյալ կերպ.




- *Կառավարման և խորհրդակցական մարմինների գործունեության թերացումներ և հնարավոր բացասական ազդեցություններ:*
- *Կադրային ապահովման, համակազմի մասնագիտական պատրաստվածության բացեր:*
- *Նյութատեխնիկական բազայի սահմանափակ հնարավորություններ:*
- *Ուսումնական անհրաժեշտ միջավայրի ձևավորման դժվարություններ:*
- *Նորամուծությունների ներդրման, նորարարությունների և բարեփոխումների համաչափ ինտեգրման խնդիրներ:*
- *Ֆորս մաժորային իրավիճակներում (բնական և տեխնածին աղետներ, համավարակներ, անկտանգային իրավիճակներ, պատերազմներ և այլն) անհրաժեշտ գործունեության ապահովման խնդիրներ:*

Ըստ կանխատեսման հնարավորության, ռիսկերը կարելի է տարբերակել այսպես.

- ✓ *Կանխատեսելի ռիսկերը* հիմնականում կապված են գործընթացի առանձին փուլերի հետ. նրանց կանխատեսելիությունը լինում է հարաբերական բնույթի:
- ✓ *Չկանխատեսվող ռիսկերը* այն ռիսկերն են, որոնք ընդհանրապես անկանխատեսելի են, օրինակ` ֆորս մաժորային իրավիճակները:

ԴԶԾ-ում ռիսկերը պլանավորվում են դպրոցի գործունեության որևէ ոլորտի համար նպատակներ ու խնդիրներ սահմանելիս: «Ռիսկերը» պլանավորելուց հետո պետք է պլանավորել *«ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները»*: Վերջիններս մարդկային և նյութական ռեսուրսների ուղղորդման և հավաքագրման գործողություններն են, որոնք պետք է չեզոքացնեն սահմանված նպատակներին հասնելու հնարավոր խոչընդոտները:

**ԴԶԾ-ի իրականացման ռիսկերը հանգամանորեն ներկայացված են **Աղյուսակ 1-ում:***

# 8. ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ

Դպրոցի զարգացման ծրագրի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ են որոշակի միջոցներ: Ընդ որում, յուրաքանչյուր գործողության իրականացման և ակնկալվող արդյունքների լիարժեք ապահովման համար հստակ նշվում են պահանջվող անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները:

Ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետ կազմակերպման համար դպրոցն ապահոված է անհրաժեշտ ուսումնական միջավայրով: Հաստատությունը համալրված է նպատակային ուսումնամեթոդական և նյութատեխնիկական բավարար միջոցներով: Դպրոցի շենքը բարեկարգ վիճակում է, հիմնականում ապահոված է աշակերտական գույքով: Դպրոցն ունի մասնակի կահավորված մարզադահլիճ, գրադարան, բնագիտական լաբորատորիա և ՆԶՊ դասասենյակ:

Դպրոցի սովորողների համար առկա են հնարավորություններ ՏՀՏ միջոցների ներգրավմամբ արդի պահանջներին համահունչ ժամանակակից կրթություն ստանալու համար: Դպրոցում գործում են ԱՐՄԱԹ ինժեներական լաբորատորիա, համակարգչային և տեխնոլոգիայի (արվեստի) դասասենյակներ, որոնք ապահոված են հեռավար ուսուցման սարքավորումներով:

Արվեստի և տեխնոլոգիայի ուսումնական խմբակների շրջանակներում հաստատությունում իրականացվում են կերպարվեստի, ասեղնագործության, մանրանկարչության և կարպետագործության խմբերի մասնագիտական պարապմունքներ:

Դպրոցն ապահոված է ինտերնետ կապով և համակարգչային սարքավորումներով:

Մեծ ուշադրություն է դարձվում սովորողների ռազմամարզական դաստիարակությանը. դպրոցն ունի ՆԶՊ կաբինետ՝ ուսումնական զենքով: Դպրոցի բակային տարածքում կառուցվել է համալիր մարզադաշտ:

Կարևոր է նշել, որ չնայած առկա ձեռքբերումներին, հաստատությունում առկա է անհրաժեշտություն միջոցների և նյութատեխնիկական պարագաների համալրման՝ դրանով ապահովելով դպրոցի զարգացման ծրագրի արդյունավետ իրականացումը:

Ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման համար անհրաժեշտ է *ուսումնական հաստատության համակարգողի* հետ համագործակցային աշխատանքի ձևավորում: Դրա շրջանակներում նախատեսված կարիքները պետք է նախապես մշակվեն և պլանավորված կերպով տրամադրվեն *համակարգողին*՝ ծախսերը գնահատելու, նախահաշիվ կազմելու և լիազոր մարմին ներկայացնելու համար:

Ուսումնական հաստատությունը ապահովում է արտադասարանական խմբակների և ուսումնական լաբորատորիաների, մասնագիտական կողմնորոշման կենտրոնների բնականոն գործունեության համար անհրաժեշտ պայմաններ: Ապահովում է անհրաժեշտ պայմաններ ուսումնական պլանին համապատասխան կրթական ծրագրերի իրականացման, կրթական գործընթացի ամբողջական կազմակերպման համար:

Ընդհանուր առմամբ, Շվանիձորի միջնակարգ դպրոցի զարգացումն ապահովելու, սահմանված նպատակներին հասնելու և ընդհանուր ուսումնական բարենպաստ միջավայր ձևավորելու համար առկա են հետևյալ խնդիրները.

- *ուսումնամեթոդական և գեղարվեստական գրականության պաշարի համալրում,*
- *ՏՀՏ բազայի նորացում, նորագույն համակարգչային սարքավորումների ձեռքբերում,*
- *առարկայական կաբինետների ձևավորում,*

- *բնագիտական լաբորատորիայի նյութատեխնիկական վերազինում,*
- *ժամանակակից տեխնիկական միջոցներով կահավորված դասարանների համալրում և հնարավորությունների ընդլայնում,*
- *ԿԱՊԿՈՒ սովորողների համար ֆիզիկական միջավայրի ձևավորում և անհատական /խելամիտ/ հարմարեցումների ապահովում,*
- *անհրաժեշտ գույքով դասասենյակաների կահավորում,*
- *ռազմամարզական վարժական հրապարակների ստեղծում,*
- *դպրոցական մարզադաշտի կահավորում և գործարկում:*

`

# ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ







**ԴԶԾ իրականացման համար անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները հանգամանորեն ներկայացված են **Աղյուսակ 1-ում:***

## ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ.

| № | Գործողությունները և միջոցառումները | Սահմանված ժամկետը ըստ ժամանակացույցի | Նախատեսված պատասխանատուները | Կատարման արդյունքների գնահատման չափանիշներն ըստ ուղղությունների | Անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները | Վերահսկողության մեխանիզմները |
|---|---|---|---|---|---|---|
| **1.Դպրոցի շենքային պայմանների և նյութատեխնիկական բազայի արդիականացում** | | | | | | |
| 1. | Դպրոցի գույքի թարմացում, անհրաժեշտ գույքի ձեռքբերում.<br>✓ տարրական դասարանների ուսումնական գույք՝<br>20 աշակերտական սեղան,<br>20 աշակերտական աթոռ,<br>4 ուսուցչական սեղան,<br>4 ուսուցչական աթոռ,<br>4 պահարան,<br>✓ բնագիտական լաբորատորիայի ուսումնական գույք՝<br>10 սեղան,20 աթոռ,<br>4 պահարան,<br>2 լաբորատոր. սեղան: | 2024 թ. | Տնօրեն/ համակարգող, հաշվապահ, տնտեսվար | Ուղղություն 2. Ներկայացված է **Աղյուսակ 2**-ում | Դպրոցի բյուջե, օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ | Զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվություն, աշխատանքային պլանների հաշվետվություններ, ֆինանսական հաշվետվություններ |

**Հնարավոր ռիսկերը, դրանց մեղմացման կամ չեզոքացման գործողությունները**

Ռիսկեր.

Անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայություն, կամ անբավարարություն:

Ֆորս մաժորային իրավիճակներ (բնական և տեխնածին աղետներ, համավարակներ, անվտանգային իրավիճակներ և այլն)

Ռիսկերի մեղմացման գործողություններ.

Ռիսկերի կառավարման նպատակով կիրականացվեն դպրոցի ֆինանսավորման պլանավորման և արդյունավետ կառավարման աշխատանքներ

| № | Գործողությունները և միջոցառումները | Սահմանված ժամկետը ըստ ժամանակացույցի | Նախատեսված պատասխանատուները | Կատարման արդյունքների գնահատման չափանիշներն ըստ ուղղությունների | Անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները | Վերահսկողության մեխանիզմները |
|---|---|---|---|---|---|---|
| 2. | Էլեկտրական հոսանքի բաշխման ներքին ցանցի մասնակի վերանորոգում. (շենքի 2-րդ հարկի 4 դասասենյակները և միջանցքի հատվածը) | 2024 թ. | Տնօրեն/ համակարգող, հաշվապահ, տնտեսվար | Ուղղություն 1. Ներկայացված է **Աղյուսակ 2**-ում | Դպրոցի բյուջե, օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ | Զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվություն, աշխատանքային պլանների հաշվետվություններ, ֆինանսական հաշվետվություններ |
| 3. | Դպրոցի 1-ին հարկի դասասենյակների մասնակի կոսմետիկ վերանորոգում՝ հատակի ներկման աշխատանքներ. տարրական դասարանների 4 դասասենյակների: | 2024 թ. | Տնօրեն/ համակարգող, հաշվապահ, տնտեսվար | Ուղղություն 1. Ներկայացված է **Աղյուսակ 2**-ում | | |
| 4. | Դպրոցի ներքին դռների վերանորոգում, նոր դռների տեղադրում. թվով 10 դռներ | 2025 թ. | Տնօրեն/ համակարգող, հաշվապահ, տնտեսվար | Ուղղություն 1. Ներկայացված է **Աղյուսակ 2**-ում | | |

**Հնարավոր ռիսկերը, դրանց մեղմացման կամ չեզոքացման գործողությունները**

Ռիսկեր.

Անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայություն, կամ անբավարարություն:

Ֆորս մաժորային իրավիճակներ (բնական և տեխնածին աղետներ, համավարակներ, անվտանգային իրավիճակներ և այլն)

Ռիսկերի մեղմացման գործողություններ.

Ռիսկերի կառավարման նպատակով կիրականացվեն դպրոցի ֆինանսավորման պլանավորման և արդյունավետ կառավարման աշխատանքներ

| № | Գործողությունները և միջոցառումները | Սահմանված ժամկետը ըստ ժամանակացույցի | Նախատեսված պատասխանատուները | Կատարման արդյունքների գնահատման չափանիշներն ըստ ուղղությունների | Անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները | Վերահսկողության մեխանիզմները |
|---|---|---|---|---|---|---|
| 5. | 2 էլեկտրոնային գրատախտակի ձեռքբերում | 2024-2025 թթ. | Տնօրեն/ համակարգող, հաշվապահ, օպերատոր | Ուղղություն 2. Ներկայացված է **Աղյուսակ 2**-ում | Դպրոցի բյուջե, օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ | Զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվություն, աշխատանքային պլանների հաշվետվություններ, ֆինանսական հաշվետվություններ |
| 6. | 3 նոթբուքի ձեռքբերում | 2025 թ. | Տնօրեն/ համակարգող, հաշվապահ, օպերատոր | Ուղղություն 2. Ներկայացված է **Աղյուսակ 2**-ում | | |
| 7. | 2 համակարգչի ձեռքբերում | 2026 թ. | Տնօրեն/ համակարգող, հաշվապահ, օպերատոր | Ուղղություն 2. Ներկայացված է **Աղյուսակ 2**-ում | | |
| 8. | 1 բազմաֆունկցիոնալ տպիչ սարքի ձեռքբերում | 2026 թ. | Տնօրեն/ համակարգող, հաշվապահ, օպերատոր | Ուղղություն 2. Ներկայացված է **Աղյուսակ 2**-ում | | |

**Հնարավոր ռիսկերը, դրանց մեղմացման կամ չեզոքացման գործողությունները**

Ռիսկեր.

Անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայություն, կամ անբավարարություն:

Ֆորս մաժորային իրավիճակներ (բնական և տեխնածին աղետներ, համավարակներ, անվտանգային իրավիճակներ և այլն)

Ռիսկերի մեղմացման գործողություններ.

Ռիսկերի կառավարման նպատակով կիրականացվեն դպրոցի ֆինանսավորման պլանավորման և արդյունավետ կառավարման աշխատանքներ

| № | Գործողությունները և միջոցառումները | Սահմանված ժամկետը ըստ ժամանակացույցի | Նախատեսված պատասխանատուները | Կատարման արդյունքների գնահատման չափանիշներն ըստ ուղղությունների | Անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները | Վերահսկողության մեխանիզմները |
|---|---|---|---|---|---|---|
| 9. | Դպրոցական մարզադաշտի կահավորում.<br>✓ պատում խոտածածկույթով,<br>✓ պարզ մարզասարքերի տեղադրում /3-4 հատ/ | 2024-2025 թթ | Տնօրեն/ համակարգող, հաշվապահ, տնտեսվար | <u>Ուղղություն 1 և 2.</u> Ներկայացված է **Աղյուսակ 2**-ում | | |
| 10. | Գրադարանի արդիականացում, նոր գրականության ձեռքբերում | 2025 թ. և շարունակաբար | Տնօրեն/ համակարգող, հաշվապահ, գրադարանա-վար | <u>Ուղղություն 1,2 և 6.</u> Ներկայացված է **Աղյուսակ 2**-ում | Դպրոցի բյուջե, օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ | Զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվություն, աշխատանքային պլանների հաշվետվություններ, ֆինանսական հաշվետվություններ |
| 11. | Դպրոցի բակային տարածքի կանաչապատ գոտու ընդլայնում, ծաղկանոցների ձևավորում | 2023 թ. | Տնօրեն/ համակարգող, տնտեսվար | <u>Ուղղություն 1.</u> Ներկայացված է **Աղյուսակ 2**-ում | | |

**Հնարավոր ռիսկերը, դրանց մեղմացման կամ չեզոքացման գործողությունները**

<u>Ռիսկեր.</u>

Անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայություն, կամ անբավարարություն:

Ֆորս մաժորային իրավիճակներ (բնական և տեխնածին աղետներ, համավարակներ, անվտանգային իրավիճակներ և այլն)

<u>Ռիսկերի մեղմացման գործողություններ.</u>

Ռիսկերի կառավարման նպատակով կիրականացվեն դպրոցի ֆինանսավորման պլանավորման և արդյունավետ կառավարման աշխատանքներ

| № | Գործողությունները և միջոցառումները | Սահմանված ժամկետը ըստ ժամանակացույցի | Նախատեսված պատասխանատուները | Կատարման արդյունքների գնահատման չափանիշներն ըստ ուղղությունների | Անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները | Վերահսկողության մեխանիզմները |
|---|---|---|---|---|---|---|
| 12. | Դպրոցի ջրամատակարարաման արտաքին ցանցի բարելավում. անհատական ջրահավաք ներքին համակարգի անցկացում | 2024 թ. | Տնօրեն/ համակարգող, հաշվապահ, տնտեսվար | Ուղղություն 1. Ներկայացված է **Աղյուսակ 2**-ում | Դպրոցի բյուջե, օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ | Զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվություն, աշխատանքային պլանների հաշվետվություններ, ֆինանսական հաշվետվություններ |

**Հնարավոր ռիսկերը, դրանց մեղմացման կամ չեզոքացման գործողությունները**

Ռիսկեր.

Անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայություն, կամ անբավարարություն:

Դպրոցի ջրամատակարարաման արտաքին ցանցի բարելավումը կապված է բնակավայրի ջրամատակարարման ընդհանուր ցանցի արդիականացման հետ. դրա դանդաղումը կամ չիրականացումը կարող է ազդել խնդրի լուծման վրա:

Ֆորս մաժորային իրավիճակներ (բնական և տեխնածին աղետներ, համավարակներ, անվտանգային իրավիճակներ և այլն)

Ռիսկերի մեղմացման գործողություններ.

Ռիսկերի կառավարման նպատակով կիրականացվեն դպրոցի ֆինանսավորման պլանավորման և արդյունավետ կառավարման աշխատանքներ

| № | Գործողությունները և միջոցառումները | Սահմանված ժամկետը ըստ ժամանակացույցի | Նախատեսված պատասխանատուները | Կատարման արդյունքների գնահատման չափանիշներն ըստ ուղղությունների | Անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները | Վերահսկողության մեխանիզմները |
|---|---|---|---|---|---|---|
| | **2. Կրթության որակի և սովորողների առաջադիմության բարձրացում** | | | | | |
| 1. | Ուսուցման գործընթացի վերջնարդյունքների ապահովման մշտադիտարկում | Յուրաքանչյուր կիսամյակի ավարտին | Տնօրեն, տնօրենի տեղակալ | Ուղղություն 6. Ներկայացված է **Աղյուսակ 2**-ում | Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում, Դպրոցն ապահովված է անհրաժեշտ ուսումնատեխնիկական պարագաներով, ՏՀՏ առցանց հանդիպման միջոցներով և այլն: | Զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվություն, համապատասխան պլանների հաշվետվություններ, ներքին գնահատում |
| 2. | Մնացորդային գիտելիքների ստուգման հայտորոշիչ աշխատանքների անցկացում | Յուրաքանչյուր կիսամյակի սկզբում | Տնօրեն, տնօրենի տեղակալ, մ/մ ղեկավարներ, ուսուցիչներ | Ուղղություն 6. Ներկայացված է **Աղյուսակ 2**-ում | | |

**Հնարավոր ռիսկերը, դրանց մեղմացման կամ չեզոքացման գործողությունները**

Ռիսկեր.

Ուսուցիչների կողմից՝ նախատեսվող աշխատանքների թերի, կամ ոչ բավարար մակարդակով իրականացում:

Ֆորս մաժորային իրավիճակներ (բնական և տեխնածին աղետներ, համավարակներ, անվտանգային իրավիճակներ և այլն)

Ռիսկերի մեղմացման գործողություններ.

Ռիսկերի կառավարման նպատակով նշված աշխատանքների արդյունավետության վերաբերյալ անհրաժեշտ քննարկումների անցկացում, ուսումնական մեթոդների հետևողական ուսուցում, դրական և հաջողված փորձի փոխանակում:

Ֆորս մաժորային իրավիճակներում դպրոցը ըստ անհրաժեշտության կանցնի հեռավար ուսուցման, նշված աշխատանքները կկազմակերպվեն առցանց:

| № | Գործողությունները և միջոցառումները | Սահմանված ժամկետը ըստ ժամանակացույցի | Նախատեսված պատասխանատուները | Կատարման արդյունքների գնահատման չափանիշներն ըստ ուղղությունների | Անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները | Վերահսկողության մեխանիզմները |
|---|---|---|---|---|---|---|
| 3. | Միջդպրոցական թեմատիկ աշխատանքների, մրցույթների և վիկտորինաների անցկացում: Առարկայական օլիմպիադաների և այլ մրցույթների մասնակցության խթանում | 2023-2028 թթ. ընթացքում, անց է կացվում շարունակաբար | Տնօրեն, տնօրենի տեղակալ, մ/մ ղեկավարներ, | <u>Ուղղություն 6.</u> Ներկայացված է **Աղյուսակ 2**-ում | Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում, Դպրոցն ապահովված է անհրաժեշտ ուսումնատեխնիկական պարագաներով՝ ՏՀՏ առցանց հանդիպման միջոցներ և այլն: | Զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվություն, համապատասխան պլանների հաշվետվություններ, ներքին գնահատում |
| 4. | Թեմատիկ-ուսումնական քննարկումների և սեմինարների (նաև առցանց) կազմակերպում | | | <u>Ուղղություն 5 և 6.</u> Ներկայացված է **Աղյուսակ 2**-ում | | |
| 5. | Դպրոց-Բուհ և դպրոց-Մուհ համագործակցության խորացում. ուսանողների ներգրավվածության խթանում և ընդլայնում | | Տնօրեն, տնօրենի տեղակալ, մ/մ ղեկավարներ, համակարգող՝ կադա | <u>Ուղղություն 6.</u> Ներկայացված է **Աղյուսակ 2**-ում | | |

**Հնարավոր ռիսկերը, դրանց մեղմացման կամ չեզոքացման գործողությունները**

<u>Ռիսկեր.</u>

Աշխատանքնում ընդգրկված կողմերի ներգրավվածության շահադրդման պակաս և վերապահ մոտեցում:

Ֆորս մաժորային իրավիճակներ (բնական և տեխնածին աղետներ, համավարակներ, անվտանգային իրավիճակներ և այլն)

<u>Ռիսկերի մեղմացման գործողություններ.</u>

Նախատեսված աշխատանքների արդյունավետության և կարևորության հիմնավորման վերաբերյալ քննարկումների կազմակերպում:

Ֆորս մաժորային իրավիճակներում դպրոցը ըստ անհրաժեշտության կանցնի հեռավար ուսուցման, նշված աշխատանքները կկազմակերպվեն առցանց:

| № | Գործողությունները և միջոցառումները | Սահմանված ժամկետը ըստ ժամանակացույցի | Նախատեսված պատասխանատուները | Կատարման արդյունքների գնահատման չափանիշներն ըստ ուղղությունների | Անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները | Վերահսկողության մեխանիզմները |
|---|---|---|---|---|---|---|
| 6. | Երկարօրյա ուսուցման կազմակերպում | 2023 թ-ից սկսած | Տնօրեն, տնօրենի տեղակալ, համակարգող՝ կադր, ուսուցիչներ, ծնողական խորհուրդ | <u>Ուղղություն 6 և 10.</u> Ներկայացված է **Աղյուսակ 2**-ում | Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում, Դպրոցն ապահովված է անհրաժեշտ ուսումնատեխնիկական պարագաներով: | Զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվություն, աշխատանքային պլանների ընթացիկ հաշվետվություններ, համապատասխան արձանագրություններ: |
| **Հնարավոր ռիսկերը, դրանց մեղմացման կամ չեզոքացման գործողությունները**<br><u>Ռիսկեր.</u><br>Ընդգրկված կողմերի ներգրավվածության շահադրդման պակաս և վերապահ մոտեցում:<br>Ֆորս մաժորային իրավիճակներ (բնական և տեխնածին աղետներ, համավարակներ, անվտանգային իրավիճակներ և այլն)<br><u>Ռիսկերի մեղմացման գործողություններ.</u><br>Նախատեսված աշխատանքների արդյունավետության և կարևորության հիմնավորման վերաբերյալ բացատրական աշխատանքներ:<br>Ֆորս մաժորային իրավիճակներում դպրոցը ըստ անհրաժեշտության կանցնի հեռավար ուսուցման, երկարօրյա ուսուցումը կկազմակերպվի իրավիճակին համապատասխան կամ ժամանակավորապես կդադարեցվի: | | | | | | |
| 7. | Սովորողների մասնագիտական կողմնորոշման աջակցման միջոցառումներ, այդ թվում՝ հանդիպումների անցկացում հայտնի և հեղինակավոր գործիչների հետ | 2023-2028 թթ ընթացքում, անց է կացվում շարունակաբար | Տնօրեն, համակարգող՝ կադր, դասղեկներ | <u>Ուղղություն 4 և 6.</u> Ներկայացված է **Աղյուսակ 2**-ում | Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում, Դպրոցն ապահովված է անհրաժեշտ ուսումնատեխնիկական պարագաներով՝ ՏՀՏ առցանց հանդիպման միջոցներ և այլն: | Զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվություն, աշխատանքային պլանների ընթացիկ հաշվետվություններ, համապատասխան արձանագրություններ, ներքին գնահատում: |
| 8. | Առարկայական թեմատիկ միջոցառումների, առարկայական շաբաթների անցկացում | | Տնօրեն, տնօրենի տեղակալ, մ/մ ղեկավարներ, համակարգող՝ կադր | <u>Ուղղություն 6.</u> Ներկայացված է **Աղյուսակ 2**-ում | | |

| № | Գործողությունները և միջոցառումները | Սահմանված ժամկետը ըստ ժամանակացույցի | Նախատեսված պատասխանատուները | Կատարման արդյունքների գնահատման չափանիշներն ըստ ուղղությունների | Անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները | Վերահսկողության մեխանիզմները |
|---|---|---|---|---|---|---|
| 9. | Լրացուցիչ պարապմունքների կազմակերպում չափորոշչային պահանջների նվազագույն շեմը չապահովող սովորողների հետ | 2023-2028 թթ ընթացքում, անց է կացվում շարունակաբար | Տնօրեն, տնօրենի տեղակալ, մ/մ ղեկավարներ, համակարգող` կադա | <u>Ուղղություն 6 և 10.</u> Ներկայացված է **Աղյուսակ 2**-ում | Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում, Դպրոցն ապահովված է անհրաժեշտ ուսումնատեխնիկական պարագաներով` ՏՀՏ առցանց հանդիպման միջոցներ և այլն: | Զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվություն, աշխատանքային պլանների ընթացիկ հաշվետվություններ, համապատասխան արձանագրություններ, ներքին գնահատում: |
| 10. | Սովորողների ընթացիկ և տարեկան առաջադիմության մշտադիտարկում և վերլուծություն | | | <u>Ուղղություն 6.</u> Ներկայացված է **Աղյուսակ 2**-ում | | |
| 11. | Սովորողների խրախուսում և պարգևատրում | | | <u>Ուղղություն 6 և 8.</u> Ներկայացված է **Աղյուսակ 2**-ում | | |

**Հնարավոր ռիսկերը, դրանց մեղմացման կամ չեզոքացման գործողությունները**

<u>Ռիսկեր.</u>

Ներգրավված կողմերի շահադրդման պակաս և աշխատանքի կատարման արդյունավետության հանդեպ վերապահ մոտեցում:

Ֆորս մաժորային իրավիճակներ (բնական և տեխնածին աղետներ, համավարակներ, անվտանգային իրավիճակներ և այլն)

<u>Ռիսկերի մեղմացման գործողություններ.</u>

Նախատեսված աշխատանքների արդյունավետության և կարևորության հիմնավորման վերաբերյալ քննարկումների կազմակերպում, բացատրական աշխատանքների անցկացում:

Ֆորս մաժորային իրավիճակներում դպրոցը ըստ անհրաժեշտության կանցնի հեռավար ուսուցման, նշված աշխատանքները կկազմակերպվեն առցանց:

| № | Գործողությունները և միջոցառումները | Սահմանված ժամկետը ըստ ժամանակացույցի | Նախատեսված պատասխանատուները | Կատարման արդյունքների գնահատման չափանիշներն ըստ ուղղությունների | Անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները | Վերահսկողության մեխանիզմները |
|---|---|---|---|---|---|---|
| 12. | Կրթության որակի և կարիքների բացահայտման նպատակով հարցումների պարբերաբար անցկացում ծնողների և աշակերտների շրջանում /այդ թվում՝ առցանց հարցումներ/ | 2023-2028 թթ ընթացքում, անց է կացվում ուսումնական տարում | Տնօրեն, տնօրենի տեղակալ, մ/մ ղեկավարներ, համակարգող՝ կադպ | <u>Ուղղություն 6 և 8.</u> Ներկայացված է **Աղյուսակ 2**-ում | Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում, Դպրոցն ապահովված է անհրաժեշտ ուսումնատեխնիկական պարագաներով՝ ՏՀՏ առցանց հանդիպման միջոցներ և այլն: | Զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվություն, աշխատանքային պլանների ընթացիկ հաշվետվություններ, համապատասխան արձանագրություններ, ներքին գնահատում: |
| 13. | Իրականացնել կրթության որակի մշտադիտարկման շարունակական աշխատանքներ՝ դասալսումներ, գրավոր աշխատանքներ և այլն | | | <u>Ուղղություն 6.</u> Ներկայացված է **Աղյուսակ 2**-ում | | |
| 14. | Ռազմամարզական, քաղաքացիական պաշտպանության միջոցառումների, գործնական վարժանքների անցկացում | | | <u>Ուղղություն 6 և 8.</u> Ներկայացված է **Աղյուսակ 2**-ում | | |
| 15. | Շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված միջոցառումների պարբերական անցկացում /ծառատունկ, շաբաթօրյակներ, աղբահանություն և այլն/ | | | <u>Ուղղություն 4 և 6.</u> Ներկայացված է **Աղյուսակ 2**-ում | | |

**Հնարավոր ռիսկերը, դրանց մեղմացման կամ չեզոքացման գործողությունները**

<u>Ռիսկեր.</u>

Ներգրավված կողմերի շահադրդման պակաս և աշխատանքի կատարման արդյունավետության հանդեպ վերապահ մոտեցում:

Ֆորս մաժորային իրավիճակներ (բնական և տեխնածին աղետներ, համավարակներ, անվտանգային իրավիճակներ և այլն)

<u>Ռիսկերի մեղմացման գործողություններ.</u>

Նման միջոցառումների կարևորության վերաբերյալ բացատրական աշխատանքներ, միջոցառումների պատշաճ և պատասխանատու կազմակերպում Ֆորս մաժորային իրավիճակներում դպրոցը ըստ անհրաժեշտության կանցնի հեռավար ուսուցման, նշված աշխատանքները կկազմակերպվեն առցանց կամ իրավիճակին համապատասխան կանցկացվեն գրաֆիկի անհրաժեշտ փոփոխություններով:

<table>
<tr><th>№</th><th>Գործողությունները և միջոցառումները</th><th>Սահմանված ժամկետը ըստ ժամանակացույցի</th><th>Նախատեսված պատասխանատուները</th><th>Կատարման արդյունքների գնահատման չափանիշներն ըստ ուղղությունների</th><th>Անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները</th><th>Վերահսկողության մեխանիզմները</th></tr>
